

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՕՆԻԿԻ**

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ  
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ  
(1914 թ. ՀՈՒԼԻՍ – 1917 թ. ՓԵՏՐՎԱՐ)**

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության սեղմագիր

**ԵՐԵՎԱՆ - 2012**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ  
Սաֆրաստյան Ռ.Ա.

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, Կարապետյան Մ.Ս.

պատմական գիտությունների դոկտոր,  
Ստեփանյան Գ.Ս.

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի ազգային արխիվ

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2012 թ. սեպտեմբերի 14-ին, ժամը 14<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. օգոստոսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

Հ. Ղ. Մուրադյան

## ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ՉՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ 1914–1917 թթ.** հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ առավել ծանր, ճակատագրական, ողբերգական, ճգնաժամային և միաժամանակ հերոսական ժամանակահատվածն էր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դրված էր հայության լինել չլինելու խնդիրը: Այդ թվականները հայության համար ճգնաժամային և միաժամանակ ամենահերոսականն էր, ուստի չէր կարող չլինել ոչ միայն հայ, այլև ստար պատմաբանների ուշադրության և հետազոտության առարկան: Ստեղծվել է բազմալեզու հսկայական պատմագիտական գրականություն: Գրվել են հոդվածներ, հուշեր, գիտական աշխատություններ, հրապարակվել փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, որոնք անշուշտ արժանի են ուշադրության: Չնայած եղած հարուստ նյութերին, 1914–1917 թթ. հայության մասնակցությունը կամավորական շարժմանը, Վանում հայկական ժամանակավոր վարչության (նահանգապետության), Յամահայկական առաջին համագումարի, և հատկապես թուրքական իշխանությունների կողմից Արևմտյան Ղայաստանի կողոպտված և ավերված բնակավայրերի ու տնտեսության վերականգնման վերաբերյալ սակավաթիվ են այն ուսումնասիրությունները, ուր մանրամասնորեն բացահայտված լինեն կարևոր և առանցքային մի շարք հիմնահարցեր:

Ուսումնասիրողների գրեթե ճնշող մեծամասնությունը 1914–1917 թթ. իրադարձություններին անդրադարձել է կապված հայերի ցեղասպանության, բռնագաղթի, գաղթականության խնդրի, մարտական գործողությունների ծավալման, Անտանտի և Քառյակ միության տերությունների ներքին և արտաքին քաղաքականության հետ և այլն: Ըստ որում, հեղինակների ուշադրությունից դուրս են մնացել զգալի թվով արխիվային փաստաթղթեր և ժամանակի մամուլի արդիական ու տեղեկատվական հրապարակումները, որոնք ուսումնասիրողներին հնարավորություն կտային առավել համակողմանի և անաչառ լուսաբանել 1914–1917 թթ. իրադարձությունները: Արխիվային փաստաթղթերի և ժամանակի պարբերական մամուլի հաղորդումները կարևոր են նաև այն առումով, որ ամենայն մանրամասնությամբ վկայում են 1914–1917 թթ. Արևմտյան Ղայաստանում տեղի ունեցած դեպքերը, հասարակական, կրոնական, բարեգործական կազմակերպությունների, իշխանությունների հայտարարությունները և հաշվետվությունները կատարված աշխատանքների, գաղթականների տեղաշարժերի, ցուցադրվող օգնության տեսակի, քանակի ու քրդական գերությունից փրկված անձանց և այլնի վերաբերյալ: Չայ պատմաբանները մի շարք դեպքերում խուսափել են անդրադառնալ 1915–1917 թթ. ռուսական զորքի կողմից Արևմտյան Ղայաստանի գրաված բնակավայրերի վերաշինության հետ կապված հիմնախնդիրները ուսումնասիրելուց, քանի որ Ղայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այդ աշխատանքներն իրականացրած անձանց զգալի մասը կամ հեռացել էր արտասահման, կամ էլ ստալինյան դժնդակ տարիներին ենթարկվել էր բռնաճնշումների: Չայ պատմաբանները զլխավորապես կենտրոնացել են արևմտահայության ցեղասպանության, գաղթականության, կամավորական շարժման և հասարակական-քաղաքական և այլ հիմնախնդիրների լուսաբանման ուղղությամբ:

**ՉԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.** Ատենախոսության նպատակն է Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական

ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունների ընդհանուր հենքի վրա լուսաբանել՝

1. Ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորական շարժումը:

2. Թուրքական կառավարության կողմից իրականացված հայերի ցեղասպանությունը և ի պատասխան դրա հայերի կազմակերպած ինքնապաշտպանական մարտերը:

3. Վանի ժամանակավոր վարչության (նահանգապետության) կազմակերպումն ու գործունեությունը: Հուլիսյան նահանջի պատճառները:

4. Հայկական կազմակերպությունների Պետրոգրադում հրավիրված համագումարի աշխատանքները և ընդունած որոշումները:

5. Թուրքիայից գրավված Արևմտյան Հայաստանի շրջաններում գինվորական գեներալ-նահանգապետության հիմնումը և իրականացվող քաղաքականությունը:

6. Ռուսական բանակի կողմից գրաված Արևմտյան Հայաստանի մի մասի՝ Ալաշկերտի, Բասենի, Վան-Վասպուրականի, Էրզրումի (Կարին), Եղզնկայի, Բաբերդի, Մուշի և Խնուսի հայ բնակչության փրկությունը, գաղթականների վերադարձը, ինքնապաշտպանական խմբերի կազմակերպումը, կողոպտված և ավերված բնակավայրերի վերականգնումը, գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը, տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպումը, ռուսական իշխանությունների գաղութային քաղաքականությունը, գրավված տարածքներում ռուս վերաբնակիչներ բնակեցնելու մտադրությունը և այլն:

Ուսումնասիրությունում առաջին անգամ ներկայացվում են հասարակական-քաղաքական, հոգևոր և բարեգործական տարբեր կազմակերպությունների, գլխավորապես Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ԿԳԸ) կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի, Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքի (Քաղաքների միություն), Թիֆլիսի հայոց գյուղատնտեսական և տնայնագործական ընկերության (Գյուղատնտեսական ընկերություն), Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության, Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլանայի կոմիտեի (Комитет Ее Императорского Высочества Великой Княжны Татьяны Николаевны для оказания временной помощи пострадавшим от военных бедствий, որը հայտնի էր Տատյանայի կոմիտե անվամբ), ամերիկյան, ինչպես նաև բրիտանական տարբեր կազմակերպությունների գործունեությունը: Արխիվային նորահայտ հարուստ նյութի հիման վրա հանգամանորեն քննության են առնված ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորական շարժումը, խմբերի լուծարման պատճառները, Արևմտյան Հայաստանի վերաշինության և փախստականների վերադարձի հետ կապված հիմնախնդիրներն ու այլ հարցեր: Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական խնդիրները լուսաբանվել են համառոտ, քանի որ նշված հիմնահարցի վերաբերյալ պաշտպանել ենք թեկնածուական ատենախոսություն և հրատարակել ենք մենագրություն<sup>1</sup>:

**ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ**

**ԵՎ**

**ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ**

**ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.**

Հետազոտությունն ընդգրկում է 1914 թ. հուլիսից մինչև 1917 թ. փետրվար ընկած

<sup>1</sup> P. O. Саакян, Оборонительные вои в Западной Армении в 1915 году. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1991, նույնի՝ Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005:

ժամանակահատվածը: Սկզբնական տարեթվի և ամսվա ընտրության համար հիմք ենք ընդունել Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, իսկ վերջնական տարեթվի և ամսվա համար՝ ռուսական երկրորդ հեղափոխությունը, որի հետևանքով Ռուսաստանում տեղի է ունենում արմատական փոփոխություն՝ երկիրը միապետությունից դառնում է հանրապետություն: Ուսումնասիրության աշխարհագրական սահմաններն ընդգրկում են ռուսական գործի գրավված Արևմտյան Չայաստանի մի մասի՝ Ալաշկերտի, Վան-Վասպուրականի, Մուշի, Երզրումի, Երզնկայի, Բաբերդի վարչական շրջանները:

**ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.** Հետազոտությունը շարադրելիս առաջնորդվել ենք արխիվային փաստաթղթերի, պատմագիտական գրականության և ժամանակի մամուլի պատմահամեմատական հետազոտման մեթոդով:

**ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.** Ատենախոսությունը քննարկվել է և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի 2012 թ. մարտի 17-ի նիստում:

**ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՆԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.** Ատենախոսությունն ունի ոչ միայն գիտական, քաղաքական, այլև գործնական, կիրառական նշանակություն: Ուսումնասիրության դրույթները կարող են օգտագործվել Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացած մարտական գործողությունների պատմության, գաղթականական խնդիրներով զբաղվող կազմակերպությունների գործունեությունը ուսումնասիրելու և պատմության ֆակուլտետներում հատուկ կուրսերի պատրաստման համար:

**ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.** Ատենախոսությունում ուսումնասիրվել է քննական վերլուծություն է տրվել հայկական, ռուսական և օտար աղբյուրներից, գրականությանը և պարբերական մամուլին, որոնք թեմատիկորեն վերաբերվում են հետազոտության ժամանակագրական սահմաններին: Ատենախոսության աղբյուրագիտական հիմքը բաժանել ենք հետևյալ խմբերի.

1. Առաջինի խմբի մեջ մտնում են նորահայտ փաստաթղթեր, որոնք հայտնաբերել ենք Հայաստանի ազգային, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, Հայաստանի պատմության թանգարանի, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի և Հայաստանի պետական պատկերասրահի, Ա-Ղոյի (Հ. Տեր-Մարտիրոսյան) ընտանեկան արխիվներից: Այստեղ կան փաստացի նյութեր, որոնք լուսաբանում են կամավորական շարժումը, արևմտահայերի ցեղասպանությունը և ինքնապաշտպանական մարտերը, Կովկասի փոխարքայության, ռուսական բանակի հրամանատարության, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի, հայ, ռուս և օտարազգի քաղաքական, պետական, հոգևոր, զինվորական, հասարակական և այլ գործիչների հեռագրերը, նամակները, հրամանները, հաշվետվությունները, հայկական, ռուսական, ինչպես նաև ամերիկյան և բրիտանական պետական, հասարակական, կրոնական ու բարեգործական կազմակերպությունների և ընկերությունների ծավալած աշխատանքները, ռուսական իշխանությունների քաղաքականությունը նորանվաճ Արևմտյան Հայաստանում և այլն:

2. Աղբյուրների առանձին խումբ են կազմում հուշերը: Հուշագրությունները, որպես անձնական ծագման աղբյուրներ, պահանջում են պատմական վերլուծության հատուկ մեթոդներ, քանի որ հեղինակներն իրենց առջև դրել են

կոնկրետ նպատակներ, համապատասխանաբար հավաքելով և համակարգելով տեղեկատվությունը, այս կամ այն փաստին գնահատականներ տալիս ելել են սեփական պատկերացումներից ու նախապատվություններից: Այնուամենայնիվ, հուշերը հաճախ հանդիսանում են միակ վկայությունները, որոնք այլ տեղ հնարավոր չէ գտնել:

3. Փաստական առատ նյութ է պարունակում ժամանակի պարբերական մամուլը, որը կազմում է աղբյուրների առանձին խումբ: Մամուլում հրապարակվել են հոդվածներ, որոնք լուսաբանել են ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունները, կամավորների մղած կռիվները, արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները, Վանի հայկական իշխանության կազմավորումն ու գործունեությունը, ռուսական կառավարության որդեգրած քաղաքականությունը թուրքիայից գրավված հայկական գավառներում, Արևմտյան Հայաստանի վերաշինության և գաղթականության վերադարձի հետ կապված խնդիրները, հայ հասարակական և բարեգործական կազմակերպությունների հաշվետվությունները, նրանց լիազորների ու պատասխանատու այլ աշխատակիցների զեկուցագրերը, ցանկները և հեռագրերը, համահայկական համագումարների կազմակերպումը, ընթացքը, ընդունած որոշումները և այլն: Մամուլի հաղորդումների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել քննադատական մոտեցում, քանի որ երբեմն տրվել է ոչ ճիշտ տեղեկատվություն, իսկ մի շարք պարբերականներ եղել են այս կամ այն քաղաքական կազմակերպության օրգաններ և որոշ դեպքերում հրապարակել են հակասական ու իրարամերժ տեղեկատվություն:

Հիմնահարցի վերաբերյալ կան մեծ քանակությամբ արխիվային նյութեր, որտեղ ամենայն մանրամասնությամբ ներկայացված հայկական, ռուսական, ամերիկյան և մասամբ բրիտանական կազմակերպությունների գործունեությունը: Առավել հարուստ են ԿՀԲԸ-ն գործունեությամբ վերաբերող արխիվային վավերագրերը: ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի լիազորները գործում էին Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր ազատագրված բնակավայրերում: Այդ լիազորների թվում էին ժամանակի հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները՝ Ավետիք Սահակյանը, Ռոստոմը (Ստեփան Ջորյան), Աշոտ Աթանասյանը, Յակով Ջավրիկը (Հակոբ Ջավրիյան) Վահան Փափազյանը (Կոմս), Համազասպ և Սարգիս Օհանջանյանները, Մուշեղ և Արտավազը Թումանյանները (մեծամուն գող Հովհաննես Թումանյանի որդիները), Կարո և Արմեն Սատունիները, և ուրիշներ:

Հիմնահարցի լուսաբանման համար մեր կողմից օգտագործվել են աղբյուրների հայտնի բոլոր խմբերը համալիր, նրանց հաղորդած տեղեկությունները համեմատելով և վերստուգելով:

Հայ կամավորական շարժման մասին մեզ հայտնի առաջին ուսումնասիրության հեղինակը մարտական գործողությունների անմիջական մասնակից, Արարատյան գնդի մարտիկ Ռուբեն Շաֆիրյանն է: Նրա հոդվածները տպագրվել են “Армянский вестник” շաբաթաթերթի մի քանի համարներում<sup>2</sup>: Ռ. Շաֆիրյանը ներկայացնում է կամավորական խմբերի կազմավորման սկիզբը, մարտական գործողությունների փուլերը և լուծարումը:

---

<sup>2</sup> “Армянский вестник”, Москва, 1917, N 10–11, 12 марта, с. 11–15; N 13, 26 марта, с. 4–8; N 14, 9 апреля с. 5–8.

Հնչակյան VI խմբի սպա, հետագայում հրամանատար Հայկ Բժշկյանը (Գայ) մի շարք հողվածներում<sup>3</sup> ներկայացրել է ստրաբաթանման, նրա նախկին հրամանատար Գրիգոր Ավշարյանի մարտական ուղին և մասնակցությունը մի շարք կռիվներին: Հարկ ենք համարում նշել, որ Հ. Բժշկյանը չէր բավարարվում սոսկ այս կամ այն մարտի նկարագրությամբ, այլև իր հողվածներում քննարկում է ռազմավարական բնույթի մի շարք հիմնարար հարցեր: Կարելի է համոզվածությամբ փաստել, որ ռուս-թուրքական ռազմաճակատում աստիճանաբար կայանում էր ապագա խորհրդային զինվորական գիտնականը:

Պատերազմի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է հետաքննել թուրքական վայրագությունները, ինչպես նաև կազմել ամփոփ մի աշխատություն, որտեղ ներկայացված կլինեին հայերի մասնակցությունը մարտական գործողություններին և արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները: Հայ հայրենակցական միությունների կենտրոնական միությունը մեծամուն գրող և հասարակական գործիչ Հ. Թումանյանի գլխավորությամբ նախաձեռնում է վերը նշված աշխատանքները: Կազմվում է Պատմառազմական հանձնաժողով, որը գլխավորում է մարտական գործողությունների անմիջական մասնակից գեներալ Ա. Կուլեբյակինը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է բազմավաստակ պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան): Նրանց հանձնարարվում է սեղմ ժամկետում պատրաստել և 1919 թ. Փարիզում բացվող վեհաժողովին ներկայացնել ամփոփ մի աշխատություն, որտեղ լուսաբանված կլինեին հայերի մասնակցությունը մարտական գործողություններին: 1920 թ. հունվարին հայկական պատվիրակության անդամ Միքայել Պապաջանյանին (Պապաջանով) հանձնվում է ուսումնասիրության մի մասը՝ 314 մեքենագիր էջ: Աշխատության հետագա ճակատագիրը մնում է անհայտ<sup>4</sup>:

Հայ կամավորական շարժման սկզբնական փուլի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում այդ շարժման նախաձեռնողներից մեկի՝ Յակով Ջավրիկի անտիպ գրառումները<sup>5</sup>: Պատերազմի սկզբում նա գտնվել է Իգդիրում և մասնակցել է II խմբի կազմավորմանը: Յ. Ջավրիկն ամենայն մանրամասնությամբ հաշվառվել է, թե ինչ է պետք ստորաբաժանման հանդերձավորման և սպառազինման համար:

<sup>3</sup> Հ. Բժշկյանի հողվածները տե՛ս «Գաղափար», Թիֆլիս, 1916 թիվ 4, 24 փետրվարի, թիվ 55, 3 յուլիսի, թիվ 56, 6 յուլիսի, թիվ 58, 10 յուլիսի: VI խմբի մասին տե՛ս Հնչակեան Տարեգիրք (Ամերիկայի շրջանի), Առաջին տարի, Փրավիտենս, 1931, Մ. Ս. Ստեփանյան, Կամավորական շարժումը և սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը, Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), Երևան, թիվ 1, 2004, Գ. Դովհաննիսյան, Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), Երևան, թիվ 1, 2003, էջ 184–192:

<sup>4</sup> Ան. Закарян, Поэт-генерал Александр Кулебякин и Армения, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Երևան, թիվ 3, 2001, էջ 115–126, Ա. Հ. Ջաքարյան, Գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինի մասնակցությունը Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասի քննիչ հանձնաժողովի աշխատանքներին, Հայկական բանակ, Երևան, թիվ 1-2, 2002, էջ 155–158, Ան. Ջաքարյան, Նորահայտ փաստաթղթեր Հովհ. Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» գործունեության մասին, ՊԲՀ, թիվ 2, 2002, էջ 271–304:

<sup>5</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 503, ցուցակ 1, գործ 56, գ. 71:

Կամավորական խմբերի կազմակերպման, մարտիկների, նրանց հրամանատարների մասին կարևոր ու անաչառ տեղեկություններ և փաստեր է հաղորդում 1914-1916 թթ. Կովկասյան II հրաձգային բրիգադի, ապա դիվիզիայի հրամանատար գեներալ Թովմաս Նազարբեկյանը (Ֆոնա Նազարբեկովը) իր անտիպ հուշերում<sup>6</sup>: Գեներալը բարձր է գնահատում հայ աշխարհագրայինների մարտական ունակությունները: Թ. Նազարբեկյանը և գնդապետ, հետագայում՝ գեներալ Մովսես Սիլիկյանը (Մոխսեյ Սիլիկով) հատկապես առանձնացնում են Դրոյի հրամանատարությամբ գործող II խմբի մարտական պատրաստականությունը և կարգապահությունը:

Թեմայի լուսաբանման համար արժեքավոր նշանակություն ունի կամավորական շարժման մասնակից և Արարատյան գնդի (V խումբ) հրամանատար Վարդանի<sup>7</sup> (Սարգիս Մեհրաբյան) անտիպ հուշերը կարևոր վկայություններ են, որոնք հնարավորություն են տալիս ամենայն մանրամասնությամբ ներկայացնել շարժման սկզբնական փուլը՝ խմբի համալրումը, առաջացած զանազան բարդությունները և դրանց շտկումը, կանոնավոր գինավարությունները, Արարատյան գնդի կազմավորումը և մասնակցությունը տարբեր մարտերին և Վանի ազատագրումը:

Կամավորական շարժման և խմբերի մարտական գործողությունների վերաբերյալ ուսումնասիրություն է գրել մարտական գործողությունների մասնակից գեներալ Գաբրիել Ղորղանյանը (Կորգանով)<sup>8</sup>: Նա գլխավորապես կենտրոնացել է հայկական հրաձգային զույգությունների վարած կռիվներին: Գեներալը պարզաբանել է, թե ինչու ռուսական հրամանատարությունն աշխատում էր խմբերը մեկ ուղղությամբ չկենտրոնացնել, այլ ուղարկել ռուս-թուրքական ռազամաճակատի տարբեր տեղամասեր: Գ. Ղորղանյանի հուշերի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ նա ոչ միայն ներկայացրել է իր անձնական դիտարկումներն, այլև լայնորեն օգտվել է գեներալ Ա. Կուլեբյակիի Պատմառազմական հանձնաժողովի նյութերից:

Օգտվել ենք կամավորական, ապա պատմառազմական բաժնի քարտուղար Լևոն Լիսիցյանի ուսումնասիրությունից, որը հիմնականում տեղեկություններ է հաղորդում կամավորական շարժման սկզբնական փուլի մասին<sup>9</sup>: Անտիպ է մնում Ա-Դոյի «Հայության երկունքը» և «Ռուսական ցարերը և Հայկական հարցը» աշխատությունները, որտեղ հեղինակն անդրադարձել է հայ կամավորական շարժմանն ու ռուս-թուրքական ռազամաճակատին<sup>10</sup>: Կամավորների մարտական գործողությունները լուսաբանելու խնդրում կարևոր է նաև V (Արարատյան) գնդի մարտիկներ Կարապետ Թարփոշյանի<sup>11</sup> և Սուրեն Չենտիկյանի<sup>12</sup> անտիպ հուշերը:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 12, 15, 19, 22, 23, 25, 28, 33:

<sup>7</sup> Նույն տեղում, ֆ. 402, ց. 1, գ. 11, 15, 20, 22:

<sup>8</sup> Գ. Ղորղանյան, Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազամաճակատին վրայ (Նիւթեր պատմութեան համար), Հայրենիք, Բոստոն, թիւ 11, սեպտեմբեր, էջ 67-85, թիւ 12, հոկտեմբեր, էջ 106-122, 1927, նույնի՝ Участье армян в мировой войне на Кавказском фронте (1914-1918) с 19-ю схемами. Пер. с фр. Ю. Л. Пирумян, Э. Е. Долбакян. Ред. Э. Е. Долбакян, А. А. Мелнк-Шахназаров, Москва, 2011.

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 7, 60, 66, 77, 133:

<sup>10</sup> Ա-Դո, Հայության երկունքը.-Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն բաժնի Ա-Դոյի ֆոնդ, ֆոնդ 839/195(դ), նույնի՝ Ռուսական ցարերը և Հայկական հարցը, Երևան, 1950, Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ:

<sup>11</sup> ՀԱԱ, ֆ. 402, ց. 1, գ. 15:

<sup>12</sup> Նույն տեղում, գ. 22:



Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) կողմից հրապարակվել են արխիվային վավերագրեր, որոնք ներկայացնում են ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Անդրանիկ Օզանյանի գործունեությունը, այդ թվում նաև կամավորական շարժման ընթացքում: Վկայակոչված են ռուս զորահրամանատարների գնահատականներն Անդրանիկի և կամավորների մարտական ունակությունների մասին<sup>13</sup>:

II խմբի մարտիկ Սուրեն Սելիքյանը<sup>14</sup> հրատարակել է հուշեր, որոնք ընդգրկում են մարտական գործողությունների այն շրջանը, որն ընդգրկում է 1915 թ. օգոստոսից մինչև 1916 թ. մարտ ընկած ժամանակահատվածը: Հատկապես հետաքրքրություն են ներկայացնում նրա գրքի այն հատվածները, որտեղ նկարագրվում են կամավորների բախումները Կ. Պոլսի շրջանից ժամանած և բարձր մարտական պատրաստականություն ունեցող թուրքական զորամասերի հետ, որոնց վարժեցրել էին գերմանացի հրահանգիչները: Հայ կամավորականների, նրանց սպառազինության և մղած կռիվների մասին հետաքրքիր և ուշագրավ հուշեր է թողել Անդրկասպյան բրիգադի խորունժի Ֆյոդոր Ելիսեևը<sup>15</sup>: Նա կարևոր տեղեկություններ է հաղորդում Վանի ազատագրման և 1915 թ. հուլիսյան մահանջի մասին:

Հայ կամավորական շարժման անդրադարձել են ռուս-թուրքական ռազմաճակատում մարտնչած և հրամանատարական տարբեր պաշտոններ զբաղեցրած ռազմական պատմաբաններ, գեներալներ Եվգենի Մասլովսկին<sup>16</sup> և Նիկոլայ Կորսունը<sup>17</sup>: Նրանց ռազմագիտական հետազոտություններում տարբեր առիթներով հիշատակվում են հայ կամավորները՝ գլխավորապես մարտական գործողությունների սկզբնական փուլում՝ Սարիղամիշի նշանավոր օպերացիայի ժամանակ: Երկուսն էլ առանձնացնում են IV խմբի հրամանատար Քեռու (Արշակ Գավաֆյան) զեկուցագիրը, որում նշանավոր հայդուկը նախազուշացնում է Կովկասյան I բանակային կորպուսի (Սարիղամիշյան ջոկատ) հրամանատար գեներալ Գ. Բերխմանին հակառակորդի գերակշիռ ուժերի հայտնվելու մասին: Քեռու հավաստի տեղեկությունն անուշադրության է մատնվում հրամանատարի կողմից, որը հետագայում ցավալի հետևանքներ է ունենում:

Հիմնախնդրին նվիրված աշխատություններից առանձնանում է Աշոտ Հարությունյանի<sup>18</sup> ուսումնասիրությունը: Ռազմական պատմաբանի հետազոտությունն առանձնանում է նրանով, որ գիտնականը եղել է զինվորական և մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմի տարիներին գերմանական զորքերի դեմ մղած մարտերին: Այսինքն՝ Ա. Հարությունյանն անդրադառնալով

<sup>13</sup> Андраник Озанян. Документы и материалы. Составители: Руководитель – А. О. Арутюнян, В. С. Эвоян, С. С. Мирзоян, П. Г. Сафян, Г. М. Шатирян, ԲՀԱ, 1991, թիվ 1-2, էջ 130-221:

<sup>14</sup> Ս. Սելիքյան, Հայ կամավորի յուշերից, Թիֆլիս, 1917:

<sup>15</sup> Փ. Ի. Елисеев, Казаки на Кавказском фронте 1914-1917. Записки полковника Кубанского казачьего войска в тринадцати брошюрах-тетралях, Москва, 2001. Սույն աշխատության գրախոսությունը տես Ա. Մելքոնյան, Ուշագրավ աշխատություն. Ֆյոդոր Ելիսեև, «Կազակները Կովկասյան ճակատում 1914-1917», ԲՀԱ, թիվ 1, 2004, էջ 174-191:

<sup>16</sup> Е. В. Масловский, Мировая война на Кавказском фронте 1914-1917 г. Стратегический очерк, Париж, 1933.

<sup>17</sup> Н. Г. Корсун, Сарыкамьшская операция на Кавказском фронте мировой войны в 1914-1915 гг., Москва, 1937, նույնի՝ Эрзерумская операция на Кавказском фронте 1916 году, Москва, 1938, նույնի՝ Алашкертская и Хамаланская операции на Кавказском фронте мировой войны 1915 г., Москва, 1940.

<sup>18</sup> А. О. Арутюнян, Кавказский фронт 1914–1917 гг., Ереван, 1971.

ռազմաքաղաքական պատմության լուսաբանմանը՝ հանդես է գալիս ոչ միայն որպես գիտնական, այլև մարտական փորձ ունեցող բարձրաստիճան սպայի տեսանկյունից վեր է լուծում մարտական գործողությունները և գնահատականներ է տալիս այս կամ այն օպերացիային: Պատմաբանը նաև անդրադառնում է Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների վարած քաղաքականությանը:

Անդրանիկին նվիրված իր փաստառատ և ծավալուն աշխատությունում ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանը<sup>19</sup> անդրադառնում է ռուս-թուրքական ռազմաճակատում և խմբի մասնակցությանը մարտական գործողություններին: Նա իր ուսումնասիրությունում ներկայացրել է խմբի մղած բոլոր մարտերը և առաջինն է, որ հայտնաբերում է կարևոր մի փաստաթուղթ՝ և խմբում ուստիկանություն հիմնելու մասին<sup>20</sup>:

Պատմաբան Մուրադ Կարապետյանի<sup>21</sup> ուսումնասիրությունները լուսաբանում են ռուս-թուրքական ռազմաճակատում հայ կամավորների գործունեությունը: Հատկապես արժեքավոր են նրա հրատարակած փաստաթղթերը, որոնք ներկայացնում են խմբերի մարտական ուղին և մղած կռիվները, ինչպես նաև հրամանատարության կողմից ձեռնարկված միջոցառումները մարտիկների շրջանում կարգապահությունն ամրապնդելու և զինվորական կանոնադրության հետ ծանոթացնելու խնդրում: Մ. Կարապետյանը հրատարակել է զիտական շրջանառության մեջ է դրել գեներալ Ա. Կուլեբյակինի հանձնաժողովի հավաքած նյութերի մի մասը<sup>22</sup>:

Պատմաբան Արամ Նազարյանը<sup>23</sup> իր ուսումնասիրությունում անդրադառնում է հայ կամավորական խմբերի կազմավորման հիմնախնդիրներին, Կարգադրիչ մարմնի հրավիրած համագումարին, հատկացված դրամական միջոցներին, ինչպես նաև ճշտել է ռուսական բանակի կազմում պատերազմին մասնակցած հայ զինծառայողների թվակազմը:

Ռուսաստանցի հետազոտող Վալերի Շամբարովի<sup>24</sup> աշխատությունն այն եզակի ռուսական ուսումնասիրություններից է, ուր ամենայն մանրամասնությամբ լուսաբանվում են 1914–1918 թթ. ռազմաքաղաքական իրադարձությունները: Հեղինակն անդրադառնում է ռուս-թուրքական ռազմաճակատին և հայ կամավորական շարժմանը: Նա բարձր է գնահատում Անդրանիկին և նրա հրամանատարության ներքո գտնվող և խումբը: Վ. Շամբարովը ընթերցողին ներկայացնում է երիտթուրքերի կողմից իրականացրած հայերի ցեղասպանությունը և եզրակացնում է, որ դրանք եղել են ծրագրված ու նպատակ են ունեցել ոչնչացել հայ ժողովրդին:

Ռուս-թուրքական ռազմաճակատում կազակային զորքերի մասնակցությանը մարտական գործողություններին (1914 թ. հոկտեմբերի 16-ից (29) մինչև 1918 թ.

<sup>19</sup> Հր. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Երկու գրքով, գ. Ա, Երևան, 1996, նույնի՝ Ջորավար Անդրանիկ (Ընդհանուր բնութագրական), ՊԲՀ, թիվ 1, 2000, էջ 44–50:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 497–498:

<sup>21</sup> Մ. Կարապետյան, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Երևան, 1999, նույնի՝ Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հայկական բանակ, թիվ 2, 1999, էջ 65–79:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 184–317:

<sup>23</sup> Ա. Ս. Նազարյան, Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ռազմաճակատում (1914–1918 թվականներ), Երևան, 1999:

<sup>24</sup> В. Е. Шамбаров, За веру, Царя и Отечество! Москва, 2003.

հունիսի 23-ը (5 հուլիսի) նվիրված է ռուսաստանցի հետազոտող Ռոման Եվրոկիմովի<sup>25</sup> թեկնածուական ատենախոսությունը: Նա, վերլուծելով խորհրդային Միության մարշալ Սեմյոն Բուդյոկոյի հուշերը, չգիտես թե ինչու նշում է, որ հեղինակը մասնակցել է Կովկասում ընթացող մարտական գործողություններին և դա այն դեպքում, երբ Կովկասյան բանակը գլխավորապես գործել է Արևմտյան Հայաստանում:

Ռուս-թուրքական ռազմաճակատում մարտական գործողությունների հետազոտմանն է նվիրված ռուսաստանցի պատմաբան Դավիթ Մարտիրոսյանի թեկնածուական ատենախոսությունը<sup>26</sup>: Նա հիմնախնդրի վերաբերյալ հանդես է եկել նաև առանձին հոդվածներով: Մեզ առավել հետաքրքրել է հոդվածներից մեկը, որտեղ պատմաբանը հիմնվելով ռուսական արխիվային փաստաթղթերի վրա՝ լուսաբանել է Վանի ազատագրման հետ կապված իրական պատմությունը<sup>27</sup>: Դ. Մարտիրոսյանը, վերլուծելով ռուսական հրամանատարության հրամանները և զեկուցագրերը, եկել է այն եզրակացության, որ Բայազետի ջոկատի (Անդրկասպյան կազակային բրիգադ) անջև դրված չի եղել մարտական առաջադրանք՝ օգնել օրհասական դրության մեջ գտնվող Վանի հայությանը: Ռուսները Վանի ուղղությամբ հայտնվել են հետապնդելով Խալիլ բեյի դիվիզիային, որը Դիմանի ճակատամարտում պարտվելուց հետո ճողոպրում էր գեներալ Թ. Նազարբեկյանի բրիգադից: Դրանով հեղինակը հերքում է թուրքական պատմագրության այն սին թեզ, թե Վանում հայերը «ապստամբել» են՝ նպատակ ունենալով աջակցել ռուսական առաջխաղացմանը: Փաստորեն Դ. Մարտիրոսյանի կողմից մերժվում է տասնամյակներ շարունակ խորհրդային պատմագրության այն տեսակետը, թե IV բանակային կորպուսի զորամասերն առաջացել են միայն ու միայն Վանի հայությանը փրկելու համար:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ռուսաստանցի պատմաբան Վլադիմիր Բուլդակովի<sup>28</sup> հոդվածը: Նա ամբաստանում է ՀՅԴ-ը, որն իր խաղաղ ժամանակվա ռազմավարությունը՝ զանգվածների հոգեկանի վրա ազդել արյունոտ սադրանքներով, «տեղափոխել» է ռուս-թուրքական ռազմաճակատ, որն արտահայտվել է հայկական զուևարտակների գործողություններում: Նա մեղադրում է հայ մարտիկներին թուրք և քուրդ խաղաղ բնակչության

---

<sup>25</sup> Р. Н. Евдокимов, Казачьи войска в условиях Первой мировой войны: Кавказский фронт. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 2005, <http://www.dissercat.com/content/kazachi-voiska-v-usloviyakh-pervoi-mirovoi-voiny-kavkazskii-front>.

<sup>26</sup> Д. Г. Мартиросян, Российско-турецкий фронт Первой мировой войны. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Саратов, Саратовский государственный университет им. Н. Г. Чернышевского, 2006, <http://dilb.rsl.ru/load.php?path=/rs10100200000/rs101002948516/rs101002948516.pdf>, նույնի՝ Российско-турецкий фронт Первой мировой войны. Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Саратов, Саратовский государственный университет им. Н. Г. Чернышевского, 2006, 263 с., <http://dilb.rsl.ru/load.php?path=/rs10100200000/rs101002948000/rs101002948516.pdf>, նույնի՝ Сарыкамьшская операция (12-24 декабря 1914 г.). Военно-исторические исследования в Поволжье: сб. науч. трудов, Саратов, 2006, Вып. 7, с. 55–65 <http://www.august-1914.ru/martirosyan2.html>.

<sup>27</sup> Նույնի՝ Ванская операция-эпизоды армянской и русской истории, <http://www.regnum.ru/news/1161786.html>.

<sup>28</sup> В. П. Булдаков, Кризис империи и революционный национализм начала XX в. в России, Вопросы истории, Москва, N 1, 2000, с. 29–45.

«կոտորածներում», որը նրանց փոխվրեժն էր ի պատասխան հայերի զանգվածային կոտորածների:

Ի տարբերություն նրա, ռուսաստանցի պատմաբան Սերգեյ Բազանովը բարձր է գնահատել հայ կամավորների մարտական ունակությունները: Նա հետևյալն է գրում. «խոսելով հայկական կամավորական կազմավորումների մարտական ուղու մասին, պետք է հաշվի առնել, որ նրանք հիմնականում ներառվում են ռուսական զորքերի գործողությունների ընդհանուր օպերատիվ և մարտավարական պատկերում: Նրանց հաջողությունները շատ դեպքերում պայմանավորված էր ռուսական զորամասերի և զորամիավորումների հաղթանակներով: Դա, սակայն, ոչ մի դեպքում չի նսեմացնում հայ կամավորների սխրագործությունները»<sup>29</sup>:

Պատմաբան Նատալյա Շուտովան իր թեկնածուականատենախոսությունում նշել է, որ վերջին տասնամյակում ռուսական պատմագրության մեջ կատարվել է հայ կամավորական շարժման վերագնահատում: Եթե խորհրդային տարիներին հայ կամավորական շարժումը որակավորվում էր որպես ցարական կառավարության կողմից հրահրված շարժում, անուշադրության մատնելով նրա հայրենասիրական բնույթը, ապա վերջին հետազոտություններում ընդգծվում է շարժման հայրենասիրական մղումը, որը նպատակ ուներ ազատագրել Արևմտյան Հայաստանը թուրքական բռնատիրությունից<sup>30</sup>:

Ամերիկյան բանակի նախկին փոխգնդապետ, ռազմական պատմաբան Էդուարդ Էրիկսոն<sup>31</sup> իր հիմնական ուսումնասիրության դաշտն է ընտրել Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատը: Նա այն սակավաթիվ ուսումնասիրողներից է, որին թույլատրվել է օգտվել թուրքական ռազմական արխիվներից և պատահական չէ, որ նրա աշխատության առաջաբանի հեղինակն է Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ գեներալ Հուսեյին Կիլիկիօղլին<sup>32</sup>: Է. Էրիկսոնը հիմնվելով գլխավորապես թուրքական զինվորական սկզբնաղբյուրների վրա, որոնք կասկածելի և միտումնավոր բնույթ ունեն, ճգնում է ապացուցել, որ Վանի ինքնապաշտպանությունը և Արարատյան գնդի կողմից քաղաքի ազատագրումը համաձայնեցված գործողություն էր: Փաստորեն նա կրկնում է թուրքական պատմագրության հայտնի տեսակետը: Ամերիկացի ռազմական պատմաբանը փորձում է գիտական հասարակայնությանը ապացուցել, որ թուրքական II և III բանակների անհաջողությունների պատճառը՝ նրանց թիկունքում գործող հայ կամավորները և «խռովարարներն» էին: Իր հերթին փոխգնդապետը զգուշորեն

<sup>29</sup> С. Базанов, Полное презрение к смерти. Довровольческие национальные части в Русской армии в годы Первой мировой войны, История, N 5, Москва, <http://his.1september.ru/2006/05/22.htm>.

<sup>30</sup> Н. Е. Шутова, Армянский вопрос в российско-турецких отношениях (1911–1921 гг.). Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, Владимир, 2006, <http://www.lib.ua-ru.net/diss/cont/210573.html>.

<sup>31</sup> E. J. Erickson, The Armenians and Ottoman Military Policy, 1915, War in History, April 2008, vol. 15, pp. 141-147, <http://whi.sagepub.com/search?author1=Edward+J.+Erickson&sortspec=date&submit=Submit>, նույնի՝ Armenian Massacres: New Records Undercut Old Blame Reexamining History, Middle East Quarterly, Summer 2006, pp. 67-75, <http://www.meforum.org/991/armenian-massacres-new-records-undercut-old-blame>.

<sup>32</sup> Նույնի՝ Ordered to Die: A History of the Ottoman Army in the First World War. Foreword by General Hüseyin Kivrikoğlu, Greenwood Press, 2000, [http://www.tc-america.org/media/Ericson\\_militarypolicy1915.pdf](http://www.tc-america.org/media/Ericson_militarypolicy1915.pdf).

շրջանցում է հայերի ցեղասպանության հետ կապված հարցերը: Է. Երիկսոնը կտրականապես հերքում է այն փաստը, որ 1914 թ. աշնանը Բաթումի նահանգում Թեշքիլաթ-ը մահուստեն իրականացրել է հայերի զանգվածային կոտորածներ: Կարելի է ենթադրել, որ գիրքը գրվել է թուրքական Գլխավոր շտաբի պատվերով կամ սերտ համագործակցությամբ:

ԱՄՆ-ի Արիզոնա նահանգի համալսարանի պատմության, փիլիսոփայության և կրոնագիտության ֆակուլտետի ղեկան Մարկ Ֆոն Յագեն<sup>33</sup> իր հոդվածում անդրադառնում է ռուս-թուրքական ռազմաճակատում մարտնչող հայ կամավորներին: Նա ամբաստանում է հայկական խմբերին, թե իբր նրանք թուրքական բանակի թիկունքում մախապատրաստել են «ապստամբություններ»:

Ամփոփելով 1914–1916 թթ. հայ կամավորական շարժումը լուսաբանող պատմագիտական գրականությունն ու աղբյուրները, հարկ ենք համարում փաստել, որ այն հիմնականում ունեցավ իր դրական նշանակությունը, թեև ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս փորձ է արվում գիտական շրջանառության մեջ մտցնել այն թեզը, թե կամավորական խմբերի կազմակերպումը պատճառներից մեկն է եղել, որ երիտթուրքական կառավարությունը նախաձեռնել է հայերի ցեղասպանությունը: Իրականում հայկական աշխարհագրային կազմավորումների մասնակցությունը լոկ առիթ է հանդիսացել թուրքական կառավարության համար հայերին ոչնչացնելու և նրանց շարժական ու անշարժ գույքին տիրանալու համար: Դա են վկայում ոչ միայն հայկական, այլև օտար աղբյուրները և հետազոտությունները:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական հրամանատարությունը նախաձեռնում է հայկական հրաձգային գումարտակների հենքի վրա ձևավորել ավելի խոշոր մարտական ստորաբաժանումներ: Դա պայմանավորված էր ոչ միայն բանակի մարտակազմը լրացնելու ցուցկությամբ, այլև այն հանգամանքով, որ հայկական գումարտակները ցուցադրել էին մարտական բարձր հատկություններ և աչքի էին ընկել իրենց կարգապահությամբ: Հայ մարտիկները հանդիսացան այն հիմնական ուժը, որը 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ կանգնեցրեց թուրքական բանակի առաջխաղացումը և փրկեց հայությանը վերջնական կործանումից:

Ատենախոսությունում հետազոտության թեմա է հանդիսացել 1915 թ. մայիսի 7-ին Վանի ազատագրումից հետո ռուսական հրամանատարության կողմից ժամանակավոր վարչության (նահանգապետության) կազմավորումն ու գործունեությունը: Առաջինը հիմնախնդիրը լուսաբանել է Ա-Դոն (Յ. Տեր-Մարտիրոսյան)<sup>34</sup>: Նա, ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրելով նահանգապետության արխիվը, ներկայացրել է նրա առօրյա աշխատանքային գործունեությունը լուսաբանող փաստաթղթերը: Հիմնախնդիրն իր արտացոլումն է գտել հայկական իշխանության տարբեր մարմիններում աշխատած Արտակ Դարբինյանի<sup>35</sup>, Արմենակ Եկարյանի<sup>36</sup>, Վարագդատ Տերոյանի<sup>37</sup> և միսիոներ Զլարենս Աշրի<sup>38</sup> հուշերում:

<sup>33</sup> Տե՛ս М. фон Хаген, Пределы реформы: национализм и русская императорская армия в 1874-1917 годы, Отечественная история, Москва, N 5, 2004, с. 37–45, <http://www.august-1914.ru/hagen.html>.

<sup>34</sup> Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին, Երևան, 1917:

<sup>35</sup> Ա. Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերն (Յուլեր 1890նէ 1940), Փարիզ, 1947:

<sup>36</sup> Յուլեր Արմենակ Եկարեանի, խմբագրեց՝ Լ. Աճենեան, Գահիրէ, 1947:

Հայկական իշխանությունը, չնայած կարճ գոյատևեց, սակայն նրա գործունեությունը մոռացության չնստնվեց: Հետագայում տպագրվում են ժամանակակիցների հուշեր, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ<sup>39</sup>: Նահանգապետության կազմավորման և գործունեության տարաբնույթ խնդիրները հետազոտվել են Ա. Հարությունյանի<sup>40</sup> և Ա. Ասրյանի<sup>41</sup> ուսումնասիրություններում:

Վանի նահանգապետության գործունեությունը լուսաբանելու նպատակով մեր կողմից շրջանառության մեջ են դրվել արխիվային վավերագրեր<sup>42</sup> և ժամանակի մամուլի հրապարակումները: Լուսաբանվել են նահանգապետարանի, տարբեր գավառների ու գավառակների, քաղաքապետարանի, դատաիրավական, տնտեսական և մյուս մարմինների գործունեությունը, հարաբերությունները ռուսական ռազմական իշխանությունների հետ, թուրք-քրդական զազանությունների հետաքննությունը, հայերի մարդասիրական վերաբերմունքը Վանում մնացած թուրք կանանց ու երեխաների նկատմամբ և այլն:

---

<sup>37</sup> Վ. Տերոյան, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան, հրատարակության պատրաստեց Վ. Կ. Դերոյան, Երևան, 2006, էջ 325-329:

<sup>38</sup> C. D. Ussher, G.H. Knapp, An American Physician in Turkey. A Narratives of Adventures in Peace and War, New York, 1917.

<sup>39</sup> Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնհինգամեակին առթիվ. 1915-1930, Վենետիկ-Ս. Ղազար, 1930, Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, Վան-Վասպուրականի հերոսամարտը-75, ժողովածու, Կազմող՝ Հ. Փափազյան, խմբագիր՝ Հ. Պողոսյան, Երևան, 1990, Արամը, Մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, Արամ Մանուկյան. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Ավագյան, Մ. Ավետիսյան, առաջաբանի հեղինակ՝ Ա. Ասրյան. գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2009, էջ 63-271:

<sup>40</sup> Ա. Հ. Հարությունյան, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան զարթոյ, ԼՀԳ, թիվ 2, 2002, էջ 46-58, նույնի՝ Վանի նահանգապետության պարենային քաղաքականությունը (1915 թ. մայիս-հուլիս), «Էջմիածին», Էջմիածին, թիվ Դ, 2010, էջ 56-61, նույնի՝ Деятельность Московского армянского комитета в годы Первой мировой войны, ԲՀԱ, թիվ 1, 2008, էջ 253-257:

<sup>41</sup> Ա. Ա. Ասրյան, Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2008, նույնի՝ Վանի նահանգապետության և ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տեսակետները նահանգապետության տարածքում քրդերի վերաբնակեցման մասին, ԲՀԱ, թիվ 1-2, 2007, էջ 31-36:

<sup>42</sup> Ռ. Սահակյան, Ոստիկանական ծառայության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում, ԲՀԱ, թիվ 2, 2003, էջ 153-161, նույնի՝ Վան քաղաքի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը, ԲՀԱ, թիվ թիվ, 2004, էջ 38-43, նույնի՝ Վարազդատ Տերոյան. Կյանքը և գործունեությունը (1887-1937 թթ.), ԲՀԱ, թիվ 1, 2005, էջ 154-163, նույնի՝ Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8-հուլիսի 17), Երևան, 2008, նույնի՝ Վանի նահանգապետության դատաիրավական համակարգի ձևավորման պատմությունից, ԲՀԱ, թիվ 1, 2006, էջ 48-56, նույնի՝ Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ.-Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Երևան, 2010, էջ 25-51, նույնի՝ Հաղթանակած Վանը (Ա-Դոյի անտիպ հուշերից), ՊԲՀ, թիվ 1, 2012, էջ 223-242, նույնի՝ Վանի նահանգապետութեան պատմութիւնից (Յունիս 14 - Յուլիս 7 - Յուլիս, 1915) եւ Ա-Դոն, ՀՀՀ, թիւ ԺԲ, Պէլլոր, 2012, էջ 407-430:

Իր պետականաշեն գործունեությամբ այքի է ընկնում Այգեստանի ինքնապաշտպանության կազմակերպիչ և փաստացի ղեկավար, Վանի և շրջանի ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) Արամ Մանուկյանը: Փաստորեն XVIII դարում Սյունիքում և Արցախում հայկական իշխանությունների կորստից հետո հայությունը հնարավորություն էր ստանում արարել ապագա պետականությունը: Ճիշտ է, հայկական իշխանությունը գոյատևում է 70 օր՝ 1915 թ. մայիսի 7-ից մինչև հուլիսի 27-ը, սակայն այն ապարդյուն չի անցնում: Նահանգապետության շրջանում կուտակված փորձն օգտագործվում է Ա. Մանուկյանի կողմից, երբ նա 1917 թ. վերջից Երևանի Հայոց ազգային խորհրդի փաստացի ղեկավարն էր և 1918 թ. հուլիսի 24-ից մինչև 1919 թ. հունվար՝ ՀՀ-ն Ներքին գործերի նախարար:

Առանձին ուսումնասիրության թեմա է հանդիսացել Թուրքիայից գրավված տարածքներում ռուսական իշխանությունների քաղաքականությունը: Նշված հիմնախնդիրը առաջիններից մեկն է վեր հանել Լեոն<sup>43</sup>: Իսկ Ալեքսանդրա Բախտուրինան, հավանաբար, առաջին ռուսաստանյան պատմաբանն է, որը քննարկել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական կայսրության քաղաքականությունը տեղական ծայրամասերում, այդ թվում և նորանվաճ վայրերում: Աշխատության հիմնական թերությունն այն է, որ հեղինակը գլխավորապես օգտագործել է տպագիր գրականություն և շրջանառության մեջ չի դրել արխիվային վավերագրեր: Իր տեղեկություններն Արևմտյան Հայաստանի, այնտեղ ռուսական վարչակարգ ստեղծելու մասին, Ա. Բախտուրինան հիմնականում քաղել է Ա. Հարությունյանի աշխատությունից<sup>44</sup>: Այնուամենայնիվ, Ա. Բախտուրինայի ուսումնասիրությունն իր բովանդակությամբ առանձնանում է մյուս աշխատություններից, քանի որ, ճիշտ է զգուշորեն, առանց շատ փակագծեր բացելու և մեկնաբանելու, փորձ է արվում լուսաբանել 1914–1917 թթ. ռուսական իրական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում<sup>45</sup>:

Հիմնախնդիրը լուսաբանելու համար մեր կողմից շրջանառության մեջ են դրվել Հայաստանի ազգային արխիվում պահվող մի շարք վավերագրեր: Այն իրենից ներկայացնում է ռուսական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների գրագրությունը Արևմտյան Հայաստանի գրաված շրջանները ապագա գաղութացմանը, ռուս և կազակ վերաբնակիչներով բնակեցումը նախապատրաստելու վերաբերյալ<sup>46</sup>:

Առանձին հետազոտության թեմա է հանդիսացել 1915–1917 թթ. Արևմտյան Հայաստանի կողոպտված և ավերված բնակավայրերի վերականգնման, փախստականների ու բռնագաղթվածների վերադարձի և փրկագնման, գյուղատնտեսական աշխատանքների վերսկսման, բնակչության ինքնապաշտպանության ու տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման հետ կապված աշխատանքները:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայությունը բացի կանավորական շարժմանն օժանդակելուց, զգալի նյութական միջոցներ է տրամադրում գաղթականությանն օգնելու և ռուսական զորքի կողմից գրաված

<sup>43</sup> Լեոն, Անցյալից. Հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 321–323, տես նաև Арутюнян А. О., указ. соч., с. 341.

<sup>44</sup> А. О. Арутюнян, указ. соч., с. 351–370.

<sup>45</sup> Ал. Юр. Бахтурин, Окраины российской империи: государственное управление и национальная политика в годы Первой мировой войны (1914–1917 гг.), Москва, 2004, с. 208–222.

<sup>46</sup> ՀԱԱ, ֆ. Коллекция 1, СА-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 3, 5, 8:

Արևմտյան Հայաստանի մի մասի տնտեսությունը վերականգնելու համար: Անհրաժեշտ էր ապահովել ցեղասպանությունից փրկվածներին ամենատարրական միջոցներով, ինչպես նաև նրանց կեցությունը, բժշկասանիտարական օգնությունը: Այս հիմնախնդրով զբաղվում են հայկական, ռուսական, ինչպես նաև ամերիկյան ու մասամբ բրիտանական հասարակական և բարեգործական կազմակերպությունները: Նրանցից առավել ակտիվ գործում են ԿՀԲԸ-ը, Քաղաքների միությունը, Գյուղատնտեսական ընկերությունը, Ս. Էջմիածնի եղբայրական օգնությունը, Մոսկվայի հայկական, Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլանայի կոմիտեները և այլ կազմակերպություններ: Հատկապես կարևոր էր 1915 թ. օգոստոսի 30-ի ռուսական կառավարության որոշումը, ըստ որի հայ փախստականները ստանալու էին պետական նպաստ: Դա որոշակիորեն թեթևացնում էր հայկական կազմակերպությունների աշխատանքը, քանի որ նրանց ունեցած միջոցները հնարավորություն չէին տալիս ամբողջությամբ բավարարել գաղթականներ կարիքները:

Հիմնահարցի լուսաբանումն արտացոլումն է գտել Կարո Սասունու<sup>47</sup>, Վահան Փափագյանի<sup>48</sup>, Արտակ Դարբինյանի<sup>49</sup>, Արմենակ Եկարյանի<sup>50</sup> հուշերում և Ավ. Հարությունյանի<sup>51</sup>, Էդ. Դանիելյանի<sup>52</sup> և այլ ուսումնասիրություններում:

Արևմտյան Հայաստանի տնտեսության վերականգնումն իր խորքում նշանակում էր գավառների հայացում: Հայտնի է, որ հայկական գավառներում բնակվող թուրք, քուրդ և մահմեդական մյուս բնակչությունն ունենալով օսմանյան կառավարության բացահայտ ու քողարկված պաշտպանությունը, զավթել էին հայերին պատկանող հողերը և հարկադրել նրանց մի մասին հեռանալ իրենց բնակավայրերից: Այդ միտումը հստակ երևում է հատկապես 1890-ական թվականների հայկական կոտորածների ժամանակ և հետո: Սուլթանական քաղաքականության արտահայտման ձևերից մեկն էլ հայկական գավառների ժողովրդագրական պատկերի միտումնավոր խեղաթյուրումն էր՝ բնակեցումը տարբեր մահմեդական ցեղերով: 1915–1917 թթ. բացառիկ հնարավորություն է ստեղծվում վերականգնել ժողովրդագրական պատկերը և կրկին տեր դառնալ նախկին բնակավայրերին ու հողատարածություններին: Նախկին բնակավայրերը վերադառանալու ցանկություն են հայտնում թուրքական ճնշումների հետևանքով տարբեր տարիներին Ռուսաստանում ապաստանած արևմտահայերը:

Հայկական, ռուսական, ինչպես նաև ամերիկյան բարեգործական կազմակերպություններն առավել լայնածավալ աշխատանքներ են կազմակերպում Վանի նահանգում: Դա ուներ իր հիմնավոր պատճառները: 1915 թ. հուլիսյան նահանգից հետո զգալի թվով վանցիներ էին փրկվել: Դա հնարավորություն էր տալիս արագ կազմակերպել նրանց վերադարձը հարազատ վայրեր և ավերված տնտեսության վերականգնումը: Բացի այդ փոխարքայության

<sup>47</sup> Կ. Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրուք, 1957:

<sup>48</sup> Վ. Փափագեան, Իմ Յուշերը, հ. երկրորդ, Պոսթըն, 1950:

<sup>49</sup> Ա. Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն (Յուշեր 1890էն 1940), Փարիզ, 1947:

<sup>50</sup> Յուշեր Արմենակ Եկարեանի. Խմբագրեց Լ. Աճեմեան, Գահիրէ, 1947:

<sup>51</sup> А. А. Арутюнян, Первая мировая война и армянские беженцы (1914–1917 гг.). Автореферат на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989.

<sup>52</sup> Է. Գ. Դանիելյան, Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914–1922 թթ. (Շարժը, կացությունը, թվակազմը). Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան:



նոտիկությունը և համեմատաբար ապահով թիկունքը հնարավորություն էր տալիս համեմատաբար կարճ ժամանակում հասցնել օգնությունը: Ճիշտ է, հուլիսյան նահանջից հետո ռուսական իշխանությունները չեն վերականգնում հայկական իշխանությունը, սակայն հայերից կազմվում է քաղաքապետարան, միլիցիոն (աշխարհագորային) ստորաբաժանում և այլն: Սկսած 1915 թ. աշնանից նահանգի հայկական բնակավայրերում իրենց գործունեությունն են ծավալում ԿԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն, Քաղաքների միությունը, Գյուղատնտեսական և ամերիկյան բարեգործական ընկերությունները: Նահանգ են ներկրվում զգալի քանակությամբ սերմացու, գյուղատնտեսական գործիքներ, լծկաններ և այլն: Հիմնվում են սննդակայաններ, բժշկասանիտարական կետեր, սննդամթերքի պահեստներ, հողագործական գործիքների պատրաստման արհեստանոցներ և այլն:

Սակայն 1916 թ. տեղի ունեցած մի քանի նահանջները ծանր հարված են հասցնում Վանին և նահանգի հայությանը: Նրանց զգալի մասը հոգնած և հուսահատված անվերջ նահանջներից, կամ դրանց մասին անընդհատ շրջանառվող լուրերից, այլևս չեն ցանկանում վերադառնալ հայրենի վայրերը: Իրենց հերթին բարեգործական կազմակերպությունները, որոնք նահանջների հետևանքով ահռելի նյութական կորուստներ են ունենում, չեն շտապում վերսկսել իրենց աշխատանքները Վանու-Վասպուրականում:

Արևմտյան Հայաստանի վերաշինության, գաղթականության օգնություն ցուցաբերող կազմակերպությունները որոշում են միավորել իրենց ջանքերը և ստեղծել մեկ միասնական ղեկավար կենտրոն՝ գործողությունները համակարգելու համար: Այդ նպատակով, 1916 թ. մայիսի 10-13-ը Պետրոգրադում հրավիրվում է գաղթականների հիմնահարցերով զբաղվող ընկերությունների համագումար: Այս հիմնահարցի լուսաբանման են նվիրված համագումարի պատգամավոր Կ. Տերոյանի<sup>53</sup> հաշվետվությունը, Ա. Հարությունյանի<sup>54</sup> և Է. Կոստանդյանի<sup>55</sup> հողվածները: Համագումարի աշխատանքը, ընթացքը և ընդունված որոշումների վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր և նյութեր է հրատարակել Հայաստանի ազգային արխիվը<sup>56</sup>:

1916 թ. փետրվարին Մուշի և Էրզրումի գրավումը հնարավորություն է ստեղծում հայկական և ռուսական կազմակերպություններին գործունեություն ծավալել նաև այդ վայրերում: Ի տարբերություն Ալաշկերտի հովտի և Վանի, կազմակերպությունների համար առաջնահերթ խնդիրը՝ քրդական և թուրքական գերությունից հայերի ազատագրումն էր՝ փրկագնման կամ բանակցությունների ճանապարհով: Այդ վայրերի բնակչության մեծ մասը կոտորվել կամ բռնազաղթի էր ենթարկվել: Եթե Վանի նահանգում և Ալաշկերտի հովտում կար որոշ թվով բնակչություն, ապա Տարոնը և Էրզրումը, ինչպես նաև Երզնկան ու Բաբերդը

<sup>53</sup> Վ. Տերոյան, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան, հրատարակության պատրաստեց Ն. Վ. Դերոյան, Երևան, 2006, էջ 330–338:

<sup>54</sup> Ա. Հ. Հարությունյան, Պետրոգրադի գաղթականական համագումարը և նրա նշանակությունը, Եջմիածին, թիվ 7, էջմիածին, 2008, էջ 73–79:

<sup>55</sup> Է. Ա. Կոստանդյան, Նորահայտ արխիվային փաստաթղթեր 1916 թ. մարտին Պետերբուրգում կայացած հայկական համագումարի մասին, ԼԳ, Երևան, թիվ 2, 2009, էջ 255–258:

<sup>56</sup> Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ. Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ. Ա. Վիրաբյան, Երևան, 2004, էջ 117–158:

գրեթե ամբողջությամբ զրկված էր հայ բնակչությունից: Այդ էր պատճառը, որ սկզբնական փուլում կազմակերպությունների գլխավոր խնդիրն էր բնակչության քրդական ու թուրքական գերությունից ազատումը, բժշկական օգնության ցուցաբերումը և բնակավայրեր տեղափոխումը, ապա միայն քանդված բնակավայրերի վերականգնումը, լքված գյուղերի բնակեցումը և գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը:

Մուշ, Էրզրում, Երզնկա և Բաբերդ են գործուղվում ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի, Քաղաքների միության և այլ կազմակերպությունների լիազորներ և ներկայացուցիչներ Ռոստոմը (Ստեփան Ջորյան)<sup>57</sup>, Կարո Սասունիհն<sup>58</sup>, Յակով Ջավրիևը, Աշոտ Աթանասյանը<sup>59</sup>, Սեպուհը (Ա. Ներսիսյան), Սեբաստացի Մուրադը (Խրիմյան)<sup>60</sup>, Ջավեն վարդապետ Բաբայանը<sup>61</sup> և ուրիշներ: Նրանք գործուն քայլեր են ձեռնարկում փրկվածներին բժշկական օգնություն ցուցաբերելու գործում: Հաջողվում է Էրզրում տեղափոխել թուրքական գերությունից ազատված և Դերսիմի քրդերի մոտ ապաստանած հայ երեխաների, կանանց ու աղջիկների մի մասին<sup>62</sup>:

1914–1917 թթ. վերաբերյալ գոյություն ունեն զգալի քանակությամբ սկզբնաղբյուրներ ու գրականություն, սակայն ներկա մտենախոսությունում մեր կողմից շրջանառության մեջ դրվել են դրանց մի մասը միայն, որը բացատրվում է հետազոտության սահմանափակ ծավալի պատճառով: Նշված նյութերը մեր կողմից գիտական շրջանառության մեջ կդրվեն, երբ ատենախոսությունը կպատրաստենք հրատարակության:

#### **ԱՏԵՆԱՆԽՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ.**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 311 էջ:

**Ներածությունում** ներկայացված է թեմայի արդիականությունը, գիտական նորույթն ու նպատակը, ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները, խնդրի նշակվածությունը, սկզբնաղբյուրների ու տպագիր գրականության քննական տեսությունը:

**Առաջին գլուխը** Հայ կամավորական շարժումն Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատում (1914 թ.

<sup>57</sup> Ռ. Սահակյան, Նորահայտ վավերագրեր Կարինում Ռոստոմի և հայ բարեգործական ընկերությունների 1916 թ. գործունեության վերաբերյալ, Վեն, Երևան, թիվ 4, 2010, էջ 195–204:

<sup>58</sup> Նույնի՝ Կարո Սասունու զեկուցագրերը՝ Տարոնի հայության վիճակի մասին, Վեն, Երևան, թիվ 1, 2010, էջ 185–199:

<sup>59</sup> Նույնի՝ Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, Երևան, ԲՀԱ, N 1-2, 2007, էջ 37–54:

<sup>60</sup> Նույնի՝ Վավերագրեր Երզնկայի և Բաբերդի հայության 1916–1917 թթ. վիճակի մասին, Վեն, Երևան, թիվ 2, 2010, էջ 171–179:

<sup>61</sup> Նույնի՝ Ա. Եջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովի ներկայացուցիչ Ջավեն վարդապետի նամակները Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ Սամսոն Հարությունյանին՝ ազատագրված Կարին քաղաքի և գավառների հայ բնակչությանն օգնելու մասին, ԲՀԱ, թիվ 2, 2010, էջ 60–70, նույնի՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տարոնահայությանը օգնության կազմակերպումը (1916–1917 թթ.), ՊԲՀ, թիվ 1, 2011, էջ 36–60:

<sup>62</sup> Գ. Խ. Ստեփանյան, Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը): Պ. Հ. Հովհաննիսյանի և Ա. Գ. Տեր-Ստեփանյանի խմբագրությամբ, Երևան, 2005, էջ 542–558:

օգոստոս - 1916 թ. սեպտեմբեր), արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին:

**Առաջին ենթագլուխը՝ Կամավորական շարժումը (1914 թ. օգոստոս – 1916 թ. սեպտեմբեր):**

Հայ հասարակության ճնշող մեծամասնությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իր ողջ եռանդն ու նյութական ու մարդկային ներուժը նվիրում է արևմտահայության ազատագրությանը: 1914-1917 թթ. հայության համար ճակատագրական նշանակություն ունեցող տարիներ էին, ուստի հայ ժողովուրդն ակտիվ մասնակցություն է ունենում մարտական, հասարակական-քաղաքական գրեթե բոլոր գործընթացներին: Հատկապես խոստումնալից էին նախապատերազմյան տարիները՝ 1912–1914 թվականների գարունը, երբ 30 տարուց ավելի անվերջ խոստումներից հետո հնարավորություն է ստեղծվում կյանքի կոչել 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով վճռված բարենորոգումները: Համաշխարհային պատերազմը, սակայն, ի չիք է դարձնում նախատեսված ծրագրերը:

Հայ գործիչներին խորապես անհանգստացնում է Կովկասյան բանակի զգալի ուժերի՝ երկու երրորդի տեղափոխումը ռուս-ավստրիական (Արևելյան) ռազմաճակատ: Հասարակության ճնշող մեծամասնության համար պարզ էր, որ երկրամասը մնում է գրեթե անպաշտպան թուրքական հնարավոր հարձակման դեպքում: Դա էր հիմնական պատճառներից մեկը, որ հայ ժողովուրդն արձագանքում է ռուսական իշխանությունների կողմից կամավորական-աշխարհագրային ազգային ստորաբաժանումներ կազմելու առաջարկին: Կամավորական շարժումը նպատակ ուներ ոչ միայն մասնակցել արևմտահայության ազատագրությանը, այլև Կովկասյան բանակի զորամասերի հետ պաշտպանել արևելահայությանն թուրքական հարձակումից:

Կամավորական շարժումը նախաձեռնում է ռուսական կառավարությունը, հանձնի Կովկասի փոխարքայության: Շարժման ղեկավարությունը ստանձնում է Թիֆլիսի հայոց ազգային կենտրոնական բյուրոն: ԿՀԲԸ-ը, ազգային երկու կուսակցությունները՝ Ս. Դ. Հնչակյան և ՀՅԴ-ն կուսակցությունները, օգտագործելով իրենց կառույցները և մասնաճյուղերը, կազմակերպում են ոչ միայն Ռուսաստանի հայաբնակ շրջանների, այլև արտասահմանի հայության կամավորագրումը, զենքի, զինամթերքի, անհրաժեշտ հանդերձանքի հայթայթումը: Սկզբնական փուլում շարժումն ընթանում էր հախուռն, առանց հստակ ղեկավարության և որոշակի ուղղության: Միայն 1914 թ. սեպտեմբերից կամավորական շարժում պաշտոնապես ընթանում է Թիֆլիսի հայոց ազգային բյուրոյի անմիջական ղեկավարության ներքո:

Պատերազմի սկզբում կազմավորվում են կամավորական յոթ խումբ: Նրանցից հինգը ձևավորում է Հայոց ազգային բյուրոն, մեկը՝ Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը, իսկ մյուսի վերաբերյալ տեղեկություններ գրեթե չկան: Վերջին երկու խմբերը 1914 թ. աշնանը և 1915 թ. հունվարին մարտական գործողություններին մասնակցելուց հետո տեղափոխվել են թիկունք և լուծարվել: Հարկ ենք համարում նշել, որ Ս. Դ. Հնչակյան կուսակցության կողմից կազմակերպած VI կամավորական խմբի վերաբերյալ համեմատաբար քիչ են արխիվային վավերագրերը և ընդհանրապես տեղեկությունները:

Կամավորական խմբերը մասնակցում են մարտական գործողություններին, հիմնականում որպես հետախուզական և մարտական պահպանության ստորաբաժանումներ: Խմբերից առավել աչքի է ընկնում I դրուժինան, որը գլխավորում էր հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Անդրանիկը:

Մարտիկները մասնակցում են տարբեր մարտական գործողությունների և արժանանում են ռուսական հրամանատարության բարձր զնահատականին:

Մարտական գործողությունների սկզբնական փուլում՝ 1914 թ. հոկտեմբեր-1915 թ. հունվար, չորս խմբերի կորուստը կազմել է 156 սպանված և 743 վիրավոր, հիվանդ և ցրտահարված<sup>63</sup>: Դա կազմում է 2482 հոգուց բաղկացած մարտակազմի 36%-ը, որն ըստ գեներալ Գ. Ղորղանյանի «պերճախօս վկայութիւն մըն է իրենց մարտական ոգիին եւ կատարած աշխատանքին»<sup>64</sup>:

Սարիղամիշի ճակատամարտի ավարտից հետո խմբերն ուղարկվում են թիկունք հանգստի և համալրման: Այդ ժամանակահատվածն օգտագործվում է մարտական գործողությունների ընթացքում նկատված թերությունները վերացնելու և շտկելու համար: Այդ նպատակով 1915 թ. փետրվարի 1-ին I խմբում կազմակերպվում է, հայոց զինուժի պատմության մեջ առաջին անգամ, ռազմական ոստիկանություն:

1915 թ. ապրիլի 1-ին, պաշտոնապես կազմակերպվում է Արարատյան գունդը՝ Վարդանի հրամանատարությամբ: Այն իր մեջ ընդգրկում է II, III և IV խմբերը: V խմբի կամավորները լրացնում են վերը նշված ստորաբաժանումների շարքերը:

Այս փուլի առավել նշանավոր երկու գործողություններն էին՝ I խմբի մասնակցությունը և կարևոր դերակատարությունը Դիլմանի ճակատամարտին (1915 թ. ապրիլի 17–18) և Արարատյան զնդի վճռորոշ դերը Վանի ազատագրման գործում: 1915 թ. հուլիսյան նահանջը, որը կատարվում է հակառակ ռազմագիտական բոլոր կանոնների, բացասաբար է ազդում կամավորական շաժման վրա: Ատենախոսությունում մեր կողմից քննարկվում են Վանի նահանջի հետ կապված խնդիրները և շրջանառության մեջ են մտցվում նորահայտ փաստեր, որոնք հաստատում են նահանջի անհիմն և հանցավոր լինելը:

1915 թ. ամռանը կազմակերպվում է կամավորական VII խումբը՝ Յովսեփ Արղությանի հրամանատարությամբ: Հայկական կամավորական խմբերը մասնակցություն են ունենում 1916 թ. գրեթե բոլոր կարևորագույն մարտական գործողություններին, ինչպես օրինակ Սուշի, Բիթլիսի գրավմանը, Էրզրումի նշանավոր օպերացիային: Վերջինիս մասնակցում է VI խումբը: Հայ կամավորներն աչքի են ընկնում իրենց քաջությամբ և խիզախությամբ: Սակայն, սկսած հատկապես 1915 թ. օգոստոսից ռուսական իշխանությունների քաղաքականությունում տեղի է ունենում կտրուկ փոփոխություն: Ռուսական բարձրագույն ռազմական և պետական ղեկավարությունն իր ճնշող մեծամասնությամբ, դեմ էր հայկական կամավորական խմբերի գոյությանը և քայլեր է ձեռնարկում դրանք լուծարելու համար: Այդ նպատակով նույնիսկ քննարկումներ են լինում կառավարությունում և Պետական դումայում: Աստիճանաբար հող է նախապատրաստվում խմբերի լուծարման համար: Ի վերջո կամավորական խմբերի հենքի վրա կազմակերպվում են հայկական հրաձգային վեց գումարտակներ:

Այնուամենայնիվ, ռուսական հրամանատարությունը չէր կարող հրաժարվել հայ աշխարհագրայիններին իրենց օպերացիաներում օգտագործելուց: Հայ կամավորները մասնակցություն են ունենում Սև ծովյան ռազմական նավատորմի

<sup>63</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 12: ՀԱԱ, ֆ. 428, ց. 1, գ. 133, թ. 32:

<sup>64</sup> Գ. Ղորղանեան, Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին Կովկասեան ռազմաճակատին վրայ (միւթեր պատմութեան համար), Հայրենիք, Պոստոն, 1927, սեպտեմբեր, թիւ 11, էջ 11:

մի քանի դեսանտային գործողություններում, ինչպես օրինակ Թերմե գյուղում թուրքական բանակի ցորենի պահեստների վրա հարձակումը (1916 թ. հոկտեմբերի 20-ին)<sup>65</sup>: Հայ հետախույզները և ուղեկցողները, ռուսական հետախուզական ջոկատի հետ, ապահովում են երզրումի օպերացիայի վճռական փուլում չափազանց կարևոր հետախուզական տեղեկությունների հայթայթումը, որը կարևոր նշանակություն է ունենում ամրոցի գրոհը սկսելու համար:

Սկսած 1917 թ. ամռանից և հատկապես աշնանից Կովկասյան ռազմաճակատից սկսում են զանգվածաբար հեռանալ ռուս զինվորները: Ռազմաճակատի պաշտպանության թուլացումը կարող էր հնարավորություն տալ թուրքական բանակին անցնել լայնածավալ հարձակման, ուստի Կովկասյան բանակի հրամանատարությունը կրկին անդրադառնում է հայկական մարտական ստորաբաժանումներին:

Հայկական զինուժի մարտունակությունը դրսևորվեց 1918 թ. մայիսյան հերոսամարտերի, 1918 թ. Բաքվի հայության ինքնապաշտպանության, Պարսկաստանում բրիտանական և ֆրանսիական զորքերի կազմում մղած մարտերի ժամանակ: Նշված մարտական գործողություններին մասնակցում էին զգալի թվով կամավորներ և նրանց հրամանատարները:

**Երկրորդ ենթագլուխ՝** Ցեղասպանության իրագործումը:

Ատենախոսությունում լուսաբանվում է արևմտահայության ցեղասպանությունը, և ինքնապաշտպանական կռիվները Արևմտյան Հայաստանում: Ուսումնասիրությունում համառոտ է ներկայացված 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների կողմից իրականացրած հայերի ցեղասպանությունը և արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը:

Մեր կողմից Հայաստանի ազգային արխիվում հայտնաբերվել են նորահայտ և գիտական հասարակայնությանն անհայտ արխիվային փաստաթղթեր Կարսի մարզում և Բաթումի նահանգում թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումների, Թեշքիլաթ-ը մահսուսեի և ռուսահպատակ մահմեդականների ջոկատների կողմից իրականացրած հայ բնակչության կողոպուտի և զանգվածային կոտորածների մասին: Այս փաստը հերքում է թուրքական պատմագրության այն սին պնդումը, թե օսմանյան կառավարությունը պայքար է մղել բացառապես թուրքահպատակ «ապստամբ» հայերի դեմ: Ռուսահպատակ հայերի նկատմամբ իրականացված դաժանությունները վկայում են, որ թուրքական կառավարության բուն նպատակն ընդհանրապես՝ հայ բնակչության ոչնչացումն էր:

Օգտագործելով պատերազմական իրադրությունը՝ երիտթուրքերը հնարավորություն էին ստանում իրականացնել օսմանահպատակ հայերի զանգվածային ոչնչացումը՝ ցեղասպանությունը: Միաժամանակ թուրքական իշխանությունները բռնազավթում են հայերի ունեցվածքը՝ վերացնելով իրենց համար անցանկալի տնտեսական մրցակիցներին:

Օսմանահպատակ հայերի ոչնչացման ծրագրի հեղինակներն ու իրագործողներն էին՝ ներքին գործերի նախարար և մեծ վեզիր Թալեթ փաշան, ռազմական նախարար Էնվեր փաշան, ծովային նախարար և Պաղեստինյան ճակատի հրամանատար Ջեմալ փաշան, ֆինանսների նախարար Ջավիդ բեյը,

---

<sup>65</sup> Ռ. Սահակեան, Տրապիզոնի գաղթական հայութեան փրկութեան կազմակերպումը Ա. Համաշխարհային պատերազմին (1916–1917 թթ.), Հայկազեան Հայագիտական Հանդես, թիւ LU, Պեյրուք, 2011, էջ 526–527:

երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ, մասնագիտությամբ բժիշկներ, Բեհաեդդին Շաքիր բեյը և Նազըմ բեյերն ու ուրիշները:

Հայերի ցեղասպանությունը դյուրացնելու նպատակով, ողջ կայսրությունը բաժանվում է երեք տարածաշրջանների.

1. Կիլիկիա և Սիրիա, 2. Արևելյան Անատոլիա (Արևմտյան Հայաստան), 3. Արևմտյան Անատոլիա:

Արևմտահայության ցեղասպանությունը ծրագրած երիտթուրքական կառավարության կողմից առանձնացվել էին կանոնավոր բանակի զորամասեր, ոստիկանական ստորաբաժանումներ, թուրք և քուրդ քաղաքացիական բնակչությունից կազմված զինված ջոկատներ: Հայերը հայտնվեցին ծանր վիճակում: Տղամարդկանց մի մասը զորակոչվել էր բանակ, իսկ հասարակական, հոգևոր և կուսակցական ազդեցիկ դեմքերի մեծ մասը կամ սպանվել, կամ էլ արքայազններին էին երիտթուրքական իշխանությունների կողմից: Այնուամենայնիվ, Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում հայ բնակչությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրք և քուրդ ջարդարարներին: Հարկ ենք համարում նշել, որ 1914–1922 թթ. բացի 1,5 միլիոն արևմտահայերից և պարսկահայերից, թուրք ջարդարարների հանցագործություններին զոհ են գնում նաև ավելի քան 500 հազար արևելահայեր<sup>66</sup>:

**Երրորդ ենթագլուխ՝** Ինքնապաշտպանական կռիվները Վան-Վասպուրականում, Մուշ-Սասունում և Շապին-Կարահիսարում:

Առաջին ինքնապաշտպանական կռիվները տեղի ունեցան Վանի վիլայեթի հայկական գյուղերում և Վան քաղաքում: Առավել ծանր մարտեր են մղվում Վան քաղաքի հայկական թաղամասեր՝ Այգեստանում և Քաղաքամեջում:

Հետագա ինքնապաշտպանական մարտերը տեղի են ունենում Վան-Վասպուրականում, Մուշ-Սասունում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Տրապիզոնի նահանգում և այլ վայրերում: Մարտերի անկազմակերպ և տարերային լինելը, հակառակորդի մարտական գերակշռությունը հնարավորություն է տալիս թուրքական կառավարությանը հիմնականում հաշվեհարդար տեսնել հայերի հետ: Ընդհանուր առմամբ ինքնապաշտպանական մարտերը հաջողությամբ են ավարտվում միայն Վանի նահանգում, Վան քաղաքում ու Մուսա լեռում: Ցավոք, մնացած բոլոր վայրերում կռիվներն ավարտվում են հայերի պարտությամբ: Ինքնին հասկանալի է, որ այդ ամենը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

1. Հայ տղամարդկանց զգալի մասի բանակ զորակոչմամբ և նրանց մեծ մասի սպանությամբ:

2. Հայ հասարակական-քաղաքական և հոգևոր ղեկավարության զգալի հատվածի զանգվածային ոչնչացմամբ:

3. Հայ բնակչության ունեցած սակավաթիվ զենքի և զինամթերքի բռնագրավմամբ և այլն:

Այնուհանդերձ, արևմտահայերը կարողացան մի շարք վայրերում կազմակերպել ինքնապաշտպանություն, դիմեցին զենքի՝ գերադասելով կռվել և

---

<sup>66</sup> Է. Գ. Դանիելյան, Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914–1922 թթ. (Շարժը, կացությունը, թվակազմը), Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 12:

գոհվել, քան մահմեդականությունը ընդունել կամ ենթարկվել տարագրության ու կոտորածի:

**Երկրորդ գլուխ՝ Վանի ժամանակավոր վարչության (նահանգապետության) կազմակերպումն ու գործունեությունը (1915 թ. մայիսի 7 – հուլիսի 27) և գեներալ-նահանգապետության հիմնումը:**

**Առաջին ենթագլուխ՝** Վարչակազմակերպչական աշխատանքներ: Փախստականների վերադարձը, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը և բնակավայրերի վերականգնումը: Վանի նահանգի բնակչության նահանջը:

Այս գլխում լուսաբանվում են Վանի ժամանակավոր վարչության կազմակերպումը և գործունեությունը: Նշված հիմնախնդիրը լուսաբանելու համար օգտվել ենք ոչ միայն փաստաթղթերի և նյութերի ժողովածուներից<sup>67</sup>, հրատարակված աշխատություններից<sup>68</sup>, հոդվածներից<sup>69</sup>, ու ատենախոսություններից<sup>70</sup> այլև շրջանառության մեջ ենք մտցրել նորահայտ արխիվային վավերագրեր<sup>71</sup>, որոնք հնարավորություն են տալիս ամենայն մանրամասնությամբ լուսաբանել հայկական իշխանության գործունեության 70-օրյա պատմությունը:

Վանի նահանգապետարանը սկսում է միջոցներ ձեռնարկել բնակչությանը վերադարձնելու բնակավայրերը: Առաջնահերթ էր երկրագործական կանոնավոր աշխատանքների կազմակերպումը, քանի որ անհրաժեշտ էր բնակչության ոչ միայն ապահովել սննդով, այլև նախապատրաստվել 1915 թ. աշնանացանին: Նահանգի բերրի հողը հնարավորություն էր տալիս ստանալ ցորենի և այլ հացահատիկային կուլտուրաների առատ բերք: Միաժամանակ քայլեր են ձեռնարկվում 1915 թ. սեպտեմբերից սկսել նահանգի դպրոցներում կանոնավոր պարապմունքները:

<sup>67</sup> Վասպուրական. Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնևհինգամեակին առթիվ. 1915–1930, Վենետիկ-Ս. Ղազար, 1930, Արամ Մանուկյան. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Գ. Ավագյան, Մ. Ավետիսյան, առաջաբանի հեղինակ՝ Ա. Ասրյան. գլխավոր խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2009, էջ 63–271:

<sup>68</sup> Ա. Ասրյան, Արամ Մանուկյանի կյանքը և գործը (Ազատագրման շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2008, Վ. Տերոյան, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ. Առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան: Հրատարակության պատրաստեց և Վ. Դերոյան, Երևան, 2006:

<sup>69</sup> Ա. Գ. Հարությունյան, Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան զաղթը, ԼՀԳ, թիվ 2, 2002, էջ 46-58, նույնի՝ Վանի նահանգապետության պարենային քաղաքականությունը (1915 թ. մայիս-հուլիս), էջմիածին, թիվ Դ, էջմիածին, 2010, էջ 56–61, նույնի՝ Деятельность Московского армянского комитета в годы Первой мировой войны, ԲՀԱ, թիվ 1, 2008, էջ 253–257, Ա. Ս. Ասրյան, Վանի նահանգապետության և ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տեսակետները նահանգապետության տարածքում քրդերի վերաբնակեցման մասին, ԲՀԱ, թիվ 1–2, 2007, էջ 31–36, նույնի՝ Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2008:

<sup>70</sup> Ա. Ա. Արությունյան, Первая мировая война и армянские беженцы (1914–1917 гг.). Автореферат на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1989, Է. Դանիելյան, Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914–1922 թթ. (Շարժը, կացությունը, թվակազմը). Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996, Հայաստանի ազգային գրադարան, է.00.01/Դ-17:

<sup>71</sup> ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 18, 19, 20, 23, 26, 27, 39, 41, 43, 48, 54, 57, 58, 62, 76, 141, 243:

Որպես փորձված կազմակերպիչ առանձնանում է Ա. Մանուկյանի անձը, որն իր գործունեությունում առաջնորդվում էր ոչ թե կուսակցական, այլ պետական անձին բնորոշ հատկություններով: Դրանցից առաջնահերթը՝ կադրային քաղաքականությունում առաջնորդվել ոչ թե անձի կուսակցական, այլ մասնագիտական ունակություններով և հատկություններով, որն ապահովում էր վարչական մարմինների նորմալ աշխատանքը:

Վան քաղաքում և նահանգում կազմակերպվում էր ոստիկանություն: Վերջինս ոչ միայն հետևում էր կարգուկանոնին, այլև հանդիսանում էր այն միակ իրական ուժը, որը կարող էր պաշտպանել զավառային բնակչությանը քրդերի հարձակումներից, քանի որ ռուսական հրամանատարությունը չունեին անհրաժեշտ քանակությամբ զորամասեր՝ թիկունքը հսկելու համար: Ոստիկանության, ավելի ստույգ պաշտոնապես զինված հայերի ներկայությունը, զսպող դեր էր խաղում քրդերի հնարավոր հարձակումները կանխելու համար: Կարելի է ենթադրել, որ ոստիկանությունը հանդիսանալու էր այն հենքը, որի վրա պետք է հետագայում կազմավորվեին կանոնավոր բանակի ստորաբաժանումները:

Ցավոք, Վանի հայկական իշխանությունը երկար կյանք չի ունենում: 1915 թ. հուլիսյան անհիմն և հանցավոր նահանջից հետո, ռուսական իշխանություններն այլևս թույլ չեն տալիս ոչ միայն Վանում, այլև Արևմտյան Հայաստանի այլ վայրերում բացառապես հայերից կազմված որևէ տեղական կառավարման մարմնի հիմնումը: Բացառություն է կազմում կրկին Վանի նահանգը, ուր ռուս նահանգապետի նշանակումից հետո, որոշ երկրորդական պաշտոններ, ինչպես օրինակ քաղաքապետարանը, դատարանը և այլն, պաշտոնավարում են հայեր:

**Երկրորդ ենթագլուխ՝ զեներալ-նահանգապետության հիմնումը: Ռուսական գործի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի գաղութացման խնդիրը:**

Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներում հաստատվում է ռուսական վարչակարգ: Սկզբնական շրջանում Կովկասի փոխարքայությունը փորձում է սեփական ուժերով ուսումնասիրել ռազմակալած Արևմտյան Հայաստանը: Սկսած 1916 թ. փետրվարից, Ռուսաստանի տարբեր գավառներից ստացվում են դիմումներ Դիադիմի օկրուգում բնակություն հաստատելու համար: Ցանկացողների սոցիալական կազմը տարբեր էր, սկսած ազնվականներից, աստիճանավորներից մինչև գյուղացիներ ու կազակներ<sup>72</sup>: Իսկ մայիսի 22-ին հիմնվում է «Պատերազմի իրավունքով թուրքիայից գրաված թուրքական Հայաստանի և այլ մարզերի զինվորական զեներալ-նահանգապետի վարչությունը» (Արևմտյան Հայաստանի զեներալ-նահանգապետություն), որը գործում է մինչև 1917 թ. ապրիլի 27-ը: Մոլի միապետական, զեներալ-լեյտենանտ Նիկոլայ Պեշկովը նշանակվում է զեներալ-նահանգապետի պաշտոնում: Անհրաժեշտ է նշել, որ ռուսական կառավարությունը չէր ցանկանում գրավված տարածքներում հիմնել հայկական ինքնավար որևէ մարմին: Ավելին, ռուսները նպատակ ունեին գաղութացնել հայկական տարածքները՝ այնտեղ բնակեցնելով ռուս վերաբնակիչների և կազակների: Այդ նպատակով Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններն են ուղարկվում գիտական արշավախմբեր և հողային խնդիրներն ուսումնասիրող հանձնաժողովներ, որոնք պետք է ընտրեին ռուսական գաղութացման համար առավել հարմար վայրերը: Այսպես, 1916 թ. ամռանն Արևմտյան Հայաստան է գալիս Տոմսկի համալսարանի նախկին ռեկտոր, նշանավոր բուսաբան և աշխարհագրագետ, պրոֆեսոր Վասիլի Սապոժնիկովի

<sup>72</sup> ՀԱԱ, ֆ. 1167, ց. 1, գ. 320, թ. 152:



գլխավորած գիտական արշավախումբը, որին հանձնարարվում է ուսումնասիրել Արևմտյան Հայաստանի հողատեսակները և բույսերը: Պրոֆեսորի կարծիքով, ռուսական գաղութացման համար առավել նախընտրելի է Մշո դաշտը<sup>73</sup>:

1916 թ. գարնանից ռուսական կառավարության հրամանով Արևմտյան Հայաստանում սկսում են գործել այսպես կոչված անգեն բանվորական հինգ գումարտակներ, որոնցից յուրաքանչյուրում ընդգրկվում են մոտ հազարական հոգի՝ հիմնականում ռուսներ: Նշված գումարտակների գործունեությունը նպատակ ուներ նախապատրաստել Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների գաղութացումը ռուսների և կազակների կողմից: Գումարտակների համար առանձնացվում են առավել բարեբեր հողերը, որտեղ և նրանք սկսում են իրենց հողագործական աշխատանքները:

Հետագայում Ն. Պեշկովին փոխարինած գեներալ Սիխայիլ Դյազհինը, ապա գեներալ Բորիս Ռոմանկո-Ռոմանովսկին որոշակի քայլեր են կատարում իրենց նախորդի սպրդած սխալներն ուղղելու համար: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ռուսական իշխանությունները կանխատեսված կերպով զանազան խոչընդոտներ և արգելքներ են հարուցում հայ հասարակական կազմակերպությունների և հայ գաղթականության առջև՝ չթուլյատրելու նրանց մուտքն այն տարածքները, որոնք նախատեսվում են ռուս և կազակ վերաբնակիչների համար: Գեներալ-նահանգապետության հիմնումը պարզորոշ ասում էր հայությանը, որ ռուսական իշխանությունները որևէ ցանկություն չունեն թուլյատրել Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավար մարմին կազմել:

**Երրորդ գլուխ՝ Արևմտյան Հայաստանի ազատագրված բնակավայրերի վերաշինությունը և բնակչության վերաբնակեցումը 1915–1917 թթ.:**

**Առաջին ենթագլուխ՝ Ալաշկերտի և Բասենի գաղթական բնակչության վերադարձի կազմակերպումը:** Բնակավայրերի վերականգնումը և գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը:

Ալաշկերտի և Բասենի հայության գաղթն սկսում է 1914 թ. հոկտեմբերի 23-ին, երբ ռուսական զորքը նահանջում է Քյոփրիքյոյից: Երկրորդ գաղթը տեղի է ունենում դեկտեմբերի 21-ին և ծանր հարված է հասցնում բնակչությանը:

Ռուսական զորքերի կողմից Ալաշկերտը վերագրավելուց հետո, Սիրական Տիգրանյանի գլխավորությամբ այնտեղ են գալիս մի խումբ երիտասարդ գործիչներ: Ինչպես վկայում է Կ. Սասունին, Ս. Տիգրանյանի գլխավորած խումբը «էլ օզնության մարմին էր, էլ կառավարչական դեր կը խաղար (անշուշտ քողարկուած կերպով), էլ տեղաւորման ու հողային բաշխման գործերը կը կարգաւորէր»<sup>74</sup>: 1914 թ. նոյեմբերի 20-ին Ազգային բյուրոն Բասեն է ուղարկում վեց հոգուց բաղկացած նոր խումբ, որը կոչվեց Բասենի քաղաքացիական մարմին: Առաջնահերթ խնդիրներից բնակչության տեղավորումը քրդական և թուրքական լքյալ գյուղերում, քանի որ հայկական գյուղերի մեծ մասը քարուքանդ էր արված: Կ. Սասունու համոզմամբ. «Տեղաւորումը կը նշանակէր հայացնել շրջանը»<sup>75</sup>: Նման խնդիր էր հետապնդում նաև Գյուղատնտեսական ընկերությանը կից հիմնված Հայ գյուղացիության տնտեսությունը վերականգնող կոմիտեն:

<sup>73</sup> Նույն տեղում, ֆ. Коллекция 1, СА-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 148 շրջ.:

<sup>74</sup> Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 45: ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 379, թ. 20:

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 49:

Վանի 1915 թ. հուլիսյան նահանջը նոր խնդիրներ է հարուցում Ալաշկերտի հովտում գտնվող հայկական կազմակերպությունների համար: Նրանք օգտագործելով իրենց համեստ հնարավորությունները և միջոցները, հարկադրված են լինում նվազագույն օգնություն ցուցաբերել փախստականներին, որոնց զգալի մասը կենտրոնանում է Մանազկերտում: Ռուսական զորքի հակահարձակումից հետո հնարավորություն է ստեղծվում ալաշկերտցիների մի մասին վերադառնալ հայրենի շեները: Նրանք սկսում են վերականգնել քայքայված տնտեսությունը և ձեռնամուխ լինել երկրագործական աշխատանքներին:

1916 թ. նոյեմբերի 24-ին Բասենի շրջանի Քաղաքների միության լիազոր Սարգիս Օհանջանյանը հայտնում է Գյուղատնտեսական ընկերության նախագահ Ա. Սահակյանին, որ Բասենի 65 գյուղերում բնակվում են շուրջ 12 հազար հոգի: Միակ իրական օգնությունը ցուցաբերում է Քաղաքների միության բժշկասանդատու կայանը, որի հնարավորություններն այնքան էլ շատ չեն: Ստեղծված իրադրության միակ լուծումը՝ սերմացուի ներկրումն է: Բնակչության մոտ կար բավարար քանակությամբ լծկաններ, որը թույլ կտա կատարել երկրագործական աշխատանքները սեփական ուժերով: Լիազորը խնդրում է օր առաջ ուղարկել սերմացու, որպեսզի հնարավոր լինի կատարել 1917 թ. գարնանացանը և բնակչությանն ապահովել սերմով: Ա. Օհանջանյանը միաժամանակ նկարագրում է տեղի կլիման և խնդրում է հնարավորության դեպքում ուղարկել «ցուրտ կլիմաներին յատուկ հացաբոյս»՝ ցորեն և գարի միայն: Հողը անջրտի է, հերկը և դրան կից ցանքը սկսում է մարտ ամսից»<sup>76</sup>:

1916 թ. վերջից Բասեն են գալիս Արևելյան Հայաստանի տարբեր բնակավայրերում ապաստանածներ, թվով 5 հազար բասենցիներ: Վերադառնում են նաև տարբեր ժամանակներում թուրքական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով հեռացածները: Վերադարձողները բնակություն են հաստատում ինչպես իրենց, այնպես լքյալ բնակավայրերում: Ա. Հարությունյանի կատարած հաշվարկի համաձայն, Բասենի շրջանում կային 2 հազար տուն գաղթական, որոնց թվաքանակը կազմում է 11290 հոգի<sup>77</sup>: Աստիճանաբար սկսում են ավելանալ բնակիչները:

Այսպիսով, 1914 թ. դեկտեմբերից մինչև 1917 թ. ընկած ժամանակահատվածում հայկական կազմակերպությունները զգալի աշխատանքներ են կատարում Ալաշկերտի հովտում: Տեղի բնակչությունը հիմնականում ֆիզիկապես չէր տուժել թուրքական հարձակումների հետևանքով, սակայն կորցրել էր անշարժ գույքի և ընտանի կենդանիների մեծ մասը: Այս հանգամանքը չէր կարող բացասաբար չանդրադառնալ բնակչության ընդհանուր կեցության և հետագա գործունեության վրա:

**Երկրորդ ենթադրույթ Վան-Վասպուրականի բնակչության վերադարձի կազմակերպումը և գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը (1915 թ. աշուն - 1917 թ. փետրվար):**

1915 թ. հուլիսյան նահանջից և Վանի վերագրավումից հետո Վասպուրականի բնակչության մի մասը սկսում է վերադառնալ: Քաղաքների միությունը Վանի հայությանը հատկացնում է 46 հազար ռուբլի, որից 13 հազարը՝

<sup>76</sup> ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 14, թ. 28-29:

<sup>77</sup> Ա. Հ. Հարությունյան, Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում Մեծ եղեռնի տարիներին, Եջմիածին, թիվ 9, 2007, էջ 67:

որք երեխաների համար մեկ ամսվա ընթացքում որբանոց հիմնելու, իսկ 33 հազարը՝ նահանգի գաղթականության համար տաք շորեր գնելու համար: Աշնանը Վանի և օկրուգի պետ փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենը Վանում կազմակերպում է քաղաքապետարան, դատարան, ոստիկանություն և երկրապահ գունդ (միլիցիա): Միլիցիան գլխավորում է սահմանադիր-ռամկավար Արմենակ Եկարյանը, որի տեղակալն էր ամերիկյան բանակի կապիտան, վերակազմյալ հնչակյան Ջիմ Չանգալյանը: 1915 թ. դեկտեմբերի 13-ի դրությամբ գնդի մարտիկների թվաքանակը հասնում է 222 հոգու<sup>78</sup>:

1916 թ. մարտի 29-ին Քաղաքների միության Գլխավոր կոմիտեին ներկայացրած հաշվետվությունում, լիազոր Աշոտ Աթանասյանը ներկայացնում է գեկուցում «Վանի շրջանի փախստականների հերթական կարիքների մասին»: Նրա կատարած նախնական ուսումնասիրությունների և հաշվարկների համաձայն, քաղաքի և վիլայեթի մարդկային կորուստները կազմել են 28 հազար, իսկ նյութականը՝ 100 միլիոն ռուբլի: Նշված ժամանակահատվածում նահանգում բնակվում են 50 հազար հոգի: Բացի ռուսական կառավարության, հայկական և ռուսական հասարակական ու բարեգործական կազմակերպություններից Արևմտյան Հայաստանի վերաշինությանը մասնակցում են նաև Հայերի և սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեն, որն իր աշխատանքները սկսում է 1916 թ. մարտին: ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն Կովկասյան ռազմաճակատի փախստականների փախստականների տեղավորման գլխավոր լիազոր, գեներալ Մ. Թամանշկից ստանում է 60 հազար ռուբլի Վանի շրջանի համար լծկաններ և սերմացու գնելու համար<sup>79</sup>:

Ռուսական բանակի հրամանատարությունը Վանի նահանգապետ էր նշանակել գեներալ Պ. Վորոնովին: Ինչպես նշում է Վանում և Պարսկաստանում ԿՀԲԸ կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գրիգոր Օհանջանյանը. «Հայը Վորոնովի և Տերմենի օրով ամենասարսափելի տարրն էր: Տերմենի անզոր համակրանքը դեպի հայերը՝ աւելի բորբոքում էր Վորոնովի ատելութիւնը դեպի վասպուրականցին»<sup>80</sup>: Այն բանից հետո, երբ նահանգից հեռանում է գեներալ Վորոնովը, վերաբերմունքը դեպի հայերը փոխվեց: Իշխանությունները, բացառությամբ մի քանի գյուղերի պարտեզների, հասկացան, որ «քրդերի հետ բարեկամանալն անկարելի բան է»<sup>81</sup>:

Գ. Օհանջանյանի կարծիքով, նորանշանակ նահանգապետ գեներալ Բուրկովսկուն Վանի նահանգապետ նշանակելը որոշակի հույսեր է առաջացնում տեղի հայության շրջանում: Նրա համոզմամբ, գեներալ Բուրկովսկին «եկել է ո՛չ թէ իշխելու, այլ կառավարելու...»<sup>82</sup>: Հուսադրող էին նահանգապետի գործնական առաջին քայլերը: Նա առաջին հերթին կատարում է նահանգի վարչական բաժանունը և նշանակում է գավառների կառավարիչներ և պաշտոնյաներ:

Առևտրականները սկսում են հարաբերություններ հաստատել Պարսկաստանի և Կովկասի հետ: Մի խումբ վանեցիներ հիմնում են «Վան» կոպերատիվ ընկերությունը, որը քաղաքի բնակչությանը պետք է մատակարար գյուղատնտեսական մթերքներ: Բնակչությունը ձեռնամուխ է լինում տների և

<sup>78</sup> Մ. Կարապետյան, Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները, էջ 150-157:

<sup>79</sup> «Համբաւաբեր», Թիֆլիս, թիվ 22, 29 մայիսի 1916, էջ 687:

<sup>80</sup> ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 3:

<sup>81</sup> Նույն տեղում, թ. 9 շրջ.:

<sup>82</sup> Նույն տեղում, թ. 10:

խանութների վերականգնմանը և նորոգմանը: Վանում և նահանգում աստիճանաբար կյանքը մտնում է խաղաղ հունի մեջ: Սակայն, 1916 թ. հուլիսի 25-ից սկսած անպաշտոն տարածվող լուրերը հնարավոր նահանջի մասին, ապակողմնորոշում են բնակչությանը: Հրամանատարության կարգադրությամբ Գավաշի և Կարճկանի գավառների բնակչությունը սկսում է լքել բնակավայրերը:

1916 թ. հուլիսյան նահանջից հետո Վան սկսեցին վերադառնալ բարեգործական զանազան կազմակերպություններ: Նրանք, սակայն, լայն գործունեություն չեն ծավալում: Կազմակերպություններին անընդհատ սարսափեցնում էր հերթական նահանջի վտանգը: Հիմնական օժանդակությունը գաղթականներից ցույց է տալիս ԿՀԲԸ-ը: Վերջինիս կողմից բացվում են սննդակայաններ և խանութներ Վանում և Թիմարի գավառի Ալյուր գյուղում<sup>83</sup>:

Գեներալ Ս. Թամանշևի ներկայացրած հաշվետվության համաձայն, ռուսական կառավարությունը, 1914-1916 թվականները, արևմտահայ գաղթականների և փախստականների կարիքների համար ծախսել է 25 միլիոն ռուբլի: 1916 թ. դրությամբ կառավարական օգնություն են ստանում 200 հազար հայ<sup>84</sup>:

Այսպիսով, սկսած 1915 թ. աշունից մինչև 1917 թ. որոշակի ընդմիջումներով, Վան-Վասպուրականում զգալի գործունեություն են ծավալում հայկական, ռուսական, ամերիկյան և մասամբ բրիտանական բարեգործական, կրոնական և հասարակական կազմակերպություններն ու ընկերությունները: Վանի նահանգում կատարված աշխատանքները, ի համեմատություն Արևմտյան Հայաստանի այլ վայրերի, առավել ծավալուն և լիարժեք էին:

**Երրորդ ենթաբաժնի Արևմտահայ գաղթականների խնդրով զբաղվող հայ հասարակական-քաղաքական և հոգևոր կազմակերպությունների I համագումարը Պետրոգրադում (1916 թ. մայիսի 3–13):**

1915 թ. աշունը Մոսկվայի և Պետրոգրադի Հայկական կոմիտեների համատեղ միտք որոշում է հրավիրել Պետրոգրադում Հայ փախստականներին նպաստող կազմակերպությունների ներկայացուցիչների<sup>85</sup> նոր համագումար: Բանն այն է, որ 1915 թ. էջմիածնում գումարված գաղթականական համագումարը<sup>86</sup> չկարողացավ լուծել իր առջև դրած խնդիրները: Ընդունվեց տաս կետից կազմված որոշում, որոնք հիմնականում կյանքի չեն կոչվում, ուստի անհրաժեշտ էր հրավիրել գաղթականական հարցերով զբաղվող կազմակերպությունների և հասարակական միությունների նոր համագումար: Ինչպես նշում է Հմայակ Մանուկյանը. «Անհրաժեշտ է միութեան գիծ մը գտնել, գոյութիւն ունեցող մարմինները ի մի բերել, ոյժերը կեդրոնացնել, գծել որոշ ուղղութիւն մը, նախատեսել գործերու յետագայ գլխաւոր կէտերը»<sup>87</sup>: Համագումարի տեղի է ունենում 1916 թ. մայիսի 10-13-ը: Սկզբում միատեղին

<sup>83</sup> ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 171, թ. 3:

<sup>84</sup> «Համբաւաբեր», թիվ 43, 23 հոկտեմբերի 1916, էջ 1347:

<sup>85</sup> Համահայկական խորհրդակցություններ, էջ 117: Է. Ա. Կոստանդյան, Նորահայտ արխիվային փաստաթղթեր 1916 թ. մարտին Պետերբուրգում կայացած հայկական համագումարի մասին, ԼՀԳ, թիվ 2, 2009, էջ 255, տես նաև ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404, թ. 411:

<sup>86</sup> Համագումարին մասնակցում են փախստականների խնդիրներով զբաղվող կազմակերպությունների 22 ներկայացուցիչներ: 1915 թ. մարտի 3-ի վերջին միտքում որոշվում է հիմնել Կենտրոնական կոմիտե կաթողիկոսի նախագահությամբ: Կոմիտեն բաղկացած էր չորս հոգևոր և ութ աշխարհիկ ներկայացուցիչներից, տես Գովիտ, Թիֆլիս, թիվ 9, 8 մարտի 1915, էջ 140, ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 117, թ. 11 շրջ-12:

<sup>87</sup> «Աշխատանք», Երևան, թիվ 1, 4 մայիս 1916:

ներկա էին 142, ապա 175 պատգամավոր, որոնք ներկայացնում էին հայ փախստականներին օժանդակող 29 կազմակերպություններ:

Նիստերում քննարկվում են դասավանդվող առարկաների, դասագրքերի և գաղթական ուսուցիչների հետ կապված հարցերը: Իսկ գյուղատնտեսական սեկցիան չի անդրադառնում վերաշինության խնդիրներին, գտնելով, որ նրա մասին պետք է մտածել միայն պատերազմի ավարտից հետո: Սեկցիայի մասնակիցների համոզմամբ, տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտ է մտածել և ջանք գործադրել «միայն եղածը կործանումից և ոչնչացումից պաշտպանելով զբաղվել»<sup>88</sup>:

Կատարված հաշվարկների համաձայն, անհրաժեշտ է յուրաքանչյուր գաղթականին կեցության համար ամսեկան հատկացնել 135 ռուբլի: Նշված ժամանակահատվածում գաղթականների թվաքանակը հաշվվում էր 200 հազար հոգի: Իրականում գաղթականության թվաքանակն ավելի շատ էր: Ըստ Կովկասյան ռազմաճակատի փախստականների տեղավորման գլխավոր լիազորի գրասենյակի պաշտոնական հաղորդագրության, 1916 թ. մարտի 1-ի դրությամբ, փախստականների ընդհանուր թվաքանակը մոտ 336235 էր<sup>89</sup>: Նրանք տեղաբաշխված էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի գրավված շրջաններում, այլև Կովկասի փոխարքայության տարբեր մահանգներում, ինչպես նաև Պարսկաստանում:

Անհրաժեշտ էր հաշվի առնել, որ վերաշինության պայմաններում գումարը եռապատկվում է, քանի որ պետք է միջոցներ տրամադրել ոչ միայն գյուղատնտեսական աշխատանքների, այլև «ընդհանուր տնտեսության և ընտանեկան հարկի շինության» համար<sup>90</sup>: Նշված նպատակների համար պահանջվող գումարը կազմում է 38 միլիոն 500 հազար ռուբլի<sup>91</sup>:

Իրավաբանական սեկցիան հանդես է գալիս արևմտահայության նկատմամբ գործարկված բռնությունների ու կոտորածի վերաբերյալ փաստերը և թվական տվյալները արծանագրելու ու «հայկական ոճրապատումը իբրև պատմական հուշարձան հրապարակի վրա դնելու, հաշվելու հայկական կորուստները թվերով, գնով և արժեքով» առաջարկով<sup>92</sup>: Նրանք նաև հարց են բարձրացնում ռուսական գերության մեջ գտնվող թուրքական բանակի մոտ երկու հազար ազգությամբ հայ զինվորների դրությունը բարելավելու համար<sup>93</sup>:

Ի նկատի ունենալով դաշնակից տերությունների 1915 թ. մայիսի հայտարարությունը, որի համաձայն պատապանատվության են ենթարկվելու հայերի նկատմամբ բռնություններ և ոճրագործություններ ցուցաբերած թուրք

<sup>88</sup> Վ. Տերոյան., Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 333:

<sup>89</sup> ՀԱԱ, ֆ. Коллекция 1, СА-74, ֆ. 391, ց. 6, գ. 305, թ. 73:

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 334:

<sup>91</sup> Համահայկական խորհրդակցություններ, էջ 119:

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 121:

<sup>93</sup> Վ. Տերոյան, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 334:

պաշտոնյաները և հանցագործները<sup>94</sup>, որոշվում է դիմել սենատոր, գաղտնի խորհրդակցական Ա. Կրիվցովի նախագահությամբ գործող քննիչ հանձնաժողովին<sup>95</sup>։

Համագումարն ընտրում է վաթսուն հոգուց բաղկացած «Պատերազմից վնասվածներին օգնող Հայկական կեդրոնական կոմիտե» (այսուհետև՝ Կենտրոնական կոմիտե)։ Նախատեսվում է, որ Կենտրոնական կոմիտեն իր նիստերը գումարելու է Կովկասում, տարին երկու անգամ։ Կենտրոնական կոմիտեն ընտրում է ինը հոգուց բաղկացած մշտական մարմին։

Պատգամավոր Վ. Տերոյանը հետևյալ կերպ է գնահատում համագումարի աշխատանքը. «Նրա (համագումարի—Ռ.Ս.) գործունեության մեջ մեծ դեր է ունեցել իր կազմի որակը և ոչ թե քանակը... Հրապարակի վրա դրված հարցը մի թվառ ժողովրդի օգնության կազմակերպությունն էր. այդ տեսակետից Համագումարը, եթե ոչ շատերի, բայց գոնե գաղթական պատգամավորների սպասելիքներն իրականացրեց և արդարացրեց»<sup>96</sup>։

Ա. Հարությունյանի կարծիքով. «Ճիշտ է, Պետրոգրադի համագումարում ընկերությունների միություն չստեղծվեց, սակայն գոյություն ունեցող յուրաքանչյուր կազմակերպություն առաջադիմեց նրանով, որ իր գործունեությունը որոշ համակարգի վերածվեց։ Հիմք դրվեց գաղթականական գործի օրենսդրական և վարչական կազմակերպությունը։ Սա էր համագումարի մեծագույն շոշափելի արդյունքը, որով նրա մյուս թերությունները ծածկվեցին»<sup>97</sup>։

Պետրոգրադում կայացած համագումարը մի փորձ էր միավորելու հայկական կազմակերպությունները, որը սակայն չի հաջողվում։ Կարծում ենք, որ միավորումը տեղի չունեցավ քաղաքական դրդապատճառներով։ Համագումարին մասնակցող կազմակերպությունները ներկայացնում էին տարբեր քաղաքական հոսանքներ և ուղղություններ, որոնք խոսքով միասնական էին, սակայն գործնականում չէին կարող միմյանց հետ աշխատել։ Բացի այդ, ռուսական իշխանություններին ձեռնտու չէր, որպեսզի կազմակերպվեր հայության ջանքերը միավորող մեկ միասնական կազմակերպություն, որի գործառույթները հիշեցնում էին կառավարական։ Սակայն, մեր կարծիքով, ամենազլխավոր պատճառը՝ տարբեր քաղաքական հոսանքներ և ուղղություններ ներկայացնող կազմակերպությունների միմյանց նկատմամբ ունեցած անհանդուրժողականությունն էր, որը հնարավորություն չի տալիս մի կողմ դնել տարածայնությունները և գործել միասնաբար։

**Զորրոդ ենթագուլխ՝ Երզրումի, Երզնկայի և Բաբերդի բնակչության փրկության կազմակերպումը, բնակավայրերի վերականգնումը և գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը։**

1916 թ. փետրվարի 3-ին ռուսական Կովկասյան բանակը դժվարին մարտերից հետո գրավում է Երզրում (Կարին) ամրոցը և քաղաքը։ Մոտավոր

<sup>94</sup> 1916 թ. ՀՀԴ Բաքվի կոմիտեի նախաձեռնությամբ, Անդրկովկասի տարբեր վայրերում ապաստանած գաղթականներից վկայություններ են հավաքվում «կտորածների կազմակերպման և իրականացման վերաբերյալ «Վշտապատում» անունով» գիրք հրատարակելու համար, և տես Վշտապատում. Հայոց Մեծ Եղեռնը ականատեսների աչքերով. Կազմողներ՝ Ամ. Վիրաբյան, Գ. Ավագյան, Պատասխանատու խմբագիր՝ Ամ. Վիրաբյան, Երևան, 2005, էջ 3։

<sup>95</sup> Համահայկական խորհրդակցություններ, էջ 122։

<sup>96</sup> Վ. Տերոյան, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, էջ 338։

<sup>97</sup> Ա. Հարությունյան, Պետրոգրադի գաղթականական համագումարը, Էջմիածին, թիվ 7, 2008, էջ 79։

տվյալներով, Երզրունի 18 հազար հայերից, ըստ այլ տվյալի՝ 25 հազար<sup>98</sup>, մնացել էին 59 հոգի<sup>99</sup>։ Քաղաքի պարետ է նշանակվում գնդապետ Մ. Սիլիկյանը։

Գարնանն Երզրունում իրենց գործունեությունն են ծավալում հետևյալ կազմակերպությունները՝ Քաղաքների միությունը, ԿԻՔԸ-ն կից գործող Յայկական կենտրոնական կոմիտեն, Կարինի հայ փախստականների և Մոսկվայի հայկական կոմիտեները։ Իսկ օգոստոսի 17-ին ԿԻՔԸ-ն կից գործող Յայկական կենտրոնական կոմիտեն պաշտոնապես դիմում է Ռոստոմին, առաջարկելով նրան զլխավորել Երզրունում և շրջանում, ինչպես նաև նոր նվաճված վայրերում հայ բնակչությանը ցույց տրվող օգնությունը։ Հիրավի, Ռոստոմի ներկայությունը լրացուցիչ ազդակ է հաղորդում Երզրունում և շրջակայքում ակտիվ գործունեություն ծավալելու համար։

Կարևոր էր Երզրունում կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմից քաղաքում որպես իր ներկայացուցիչ Ջավեն վարդապետ Բաբայանին նշանակելը։ Նա հանդիսանալու էր համակարգող և կազմակերպող օղակ գործող կազմակերպությունների միջև։

Միաժամանակ անհրաժեշտ էր լուծել թուրքական իշխանությունների կողմից հայերից բռնագրավված գույքի խնդիրը։ Գույքը գտնվում էր հիմնականում Երզրունի Ս. Աստվածածին եկեղեցում և հարևանությամբ գտնվող մատուռում։ Գևորգ Ե-ն պաշտոնապես դիմում է Կովկասյան բանակի հրամանատարությանը՝ գույքի հետ կապված խնդիրը տնօրինելու համար։

1916 թ. հոկտեմբերի 26-ի նամակում Տ. քահանա Տեր-Վարդանյանը խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանին տեղեկացնում է, որ Երզրունի շրջանի 26 գյուղեր բնակեցված են հայերով։ Բուն քաղաքում գտնվում են 1200 զաղթական։ Մոսկվայի հայկական կոմիտեի հիմնած որբանոցում ապաստանել են 234 երեխա։ Որբերի հայտնաբերման աշխատանքները խիստ անհրաժեշտ էին, քանի որ տեղեկություններ էին ստացվել, որ ծնողազուրկ հայ երեխաները ոչ միայն բռնի պահվում են թուրքերի մոտ, այլև նրանց տանում են Ռուսաստան։ Համաձայն Ախալքալաքի գավառի Սուլտա գյուղի բնակիչ Ջարմայր Եղոյանի վկայության. «Սարիղամիշի երկաթուղու կայարանում տեսայ երկու զինուոր, որոնց մօտ գտնուում էին 18 հոգի հայ որբեր 6-10 տարեկան։ Որբերը բերուած էին Երզրունի նահանգի թուրք բնակիչների մօտից և ռուս սպաների յանձնարարութեամբ յիշեալ երկու զինուորները պիտի տանէին Ռուսաստան սպաների տնեցոց մօտ ապրելու իբրև հոգեզաւակ»<sup>100</sup>։

Երզնկայում գտնված ժամանակ Ռոստոմը հեռագրում է Ալեքսանդր Խատիսյանին շտապ դեղորայք, պարեն ուղարկելու անհրաժեշտության մասին։ Փրկվածների թիվը հասնում է չորս հազարի։ Ողջ մնացածներին զլխավորապես ապաստան էին տվել Դերսիմի զազա քրդական ցեղը, որն իր վերաբերմունքով արմատապես տարբերվում էին քրդական մյուս ցեղախմբերից<sup>101</sup>։

1916 թ. հունիսին Երզնկա է ժամանում Մոսկվայի հայկական կոմիտեի թուրքիկ ջոկատը, որը պետք է բժշկական օգնություն ցուցաբերեր տեղի

<sup>98</sup> «Վան-Տոսպ», Թիֆլիս, 28 փետրուարի 1916, թիվ 14, էջ 14։

<sup>99</sup> Հ. Խունունցի ունեցած տեղեկության համաձայն, ողջ մնացածների թիվը մոտ 80 է, տես՝ Համահայկական խորհրդակցություններ, էջ 89։

<sup>100</sup> «Համբավաբեր», N թիվ, 30 հոկտեմբերի 1916, էջ 1391։

<sup>101</sup> Սկզբնապես զազաները պատուհաս էին հայ բնակչության համար։ Այդ ռազմատենչ և ազատասեր ժողովուրդը բազմիցս ապստամբել էր օսմանյան տիրապետության դեմ՝ ձգտելով պահպանել իրենց կիսանկախ վիճակը, տես՝ Ա. Ա. Մելքոնյան, Երզրուն, Նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 1994, էջ 61–62։

բնակչությանը: Պատանդ հայերի որոնման համար կազմակերպվում է հատուկ ջոկատ, որն ազդեցիկ քուրդ բեկերի միջնորդությամբ սկսում է փնտրողական աշխատանքները: Քրդերը, համապատասխան գումարի դիմաց լեռներից տեղափոխում էին հայերին և հանձնում կոմիտեի անդամներին: 1916 թ. սեպտեմբերի 10-ին Թիֆլիսից Ռոստոմին գրած նամակում Յ. Չավրիևը հայտնում է Դերսիմից եկած մոր գաղթականների մասին: Իշխանությունները շարունակում են նախկինում որդեգրած քաղաքականություն և թույլ չեն տալիս գյուղացիներին բնակվել գյուղերում, իսկ քաղաքաբնակներին երգրումում, ինչպես նաև զբաղվել հողագործությամբ և առևտրով: Այնուամենայնիվ, հաջողվում է հասնել նրան, որ թույլատրվում է փախստականներին բնակվել լքյալ գյուղերում, վարել, ցանել և հնձել դաշտերը:

Վերապրած հայերը երզնկայում կազմակերպում են մարտական խմբեր, որոնք իրականացնում են հայ բնակչության ինքնապաշտպանությունը: Նրանք միաժամանակ փնտրողական աշխատանքներ են կատարում և հայտնաբերում են թուրքերի և քրդերի տներում բռնի պահվող հայերին: Նշված գործողությունների ղեկավարը Սեբաստացի Մուրադն էր: Նա նաև գործակալներ է հավաքագրում հայերից, հույներից, ինչպես նաև այն քրդերից, որոնք բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ: Գեներալ Ն. Մորելի բնութագրմամբ. «Շնորհիվ Մուրադի եռանդին, երկրամասի և տեղի բնակչության բնավորության հիմնավոր իմանալուն և գործակալների հաջող ընտրությանը՝ երզնկայից հետախուզությունը կատարվում էր բավականին հաջող: Ջոկատի շտաբը ժամանակին տեղեկացված էր թուրքերի և քրդերի կողմից նախապատրաստվող հարձակումների, նրանց ուժերի կենտրոնացման, տեղաշարժման և ուժերի մասին»<sup>102</sup>:

Երզրումը, ինչպես նաև Բաբերդն ու Երզնկան Արևմտյան Հայաստանի այն վայրերից էին, որոնք առեւելի կորուստներ էին կրել 1915 թ. ցեղասպանության ժամանակ: Ի տարբերություն Վանի և Ալաշկերտի, այստեղ գործող հայկական կազմակերպությունները հարկադրված էին այլ գործելակերպ որդեգրել: Նրանք առաջին հերթին քայլեր են ձեռնարկում վերացնելու հայերի երգրում մտնելու արգելքը: Դա ամիրաժեշտ էր, քանի որ 1916 թ. փետրվար-մարտին հնարավոր չէր կազմակերպել ողջ մնացածների տեղափոխումը Կովկասի փոխարքայություն: Այդ էր պատճառը, որ երզրում են գործուղվում հայ հասարակական և քաղաքական նշանավոր գործիչներ Ռոստոմը և Յ. Չավրիևը: Նրանց է հանձնարարվում տեղում կազմակերպել ողջ մնացածների փրկությունը, ինչպես նաև թուրքերի և քրդերի ընտանիքներում բռնի պահվող հայ կանանց և երեխաների ազատման բարդ և դժվարին գործը: Ի վերջո հայ հասարակական-քաղաքական շրջանները ստանում են իշխանությունների թույլտվությունը և ցեղասպանությունից փրկված հայերին բնակեցնում են ոչ միայն հայկական, այլև թուրքերի կողմից լքված գյուղերում: Երզրումում իրենց գործունեությունն են մտավալուն Հայկական կենտրոնական կոմիտեն, Քաղաքների միությունը, Սոսկվայի հայկական կոմիտեն, իսկ ավելի ուշ՝ Գյուղատնտեսական ընկերությունը: Հիմնվում են սննդակայաններ, հիվանդանոցներ, որբանոցներ և այլն: Իշխանությունների հետ հարաբերությունները կարգավորելուց հետո

<sup>102</sup> Ռ. Սահակյան, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914–1917 թթ.), ՊԲՀ, թիվ 3, 2011, էջ 116:



հնարավորություն է ստեղծվում նախածեռնել վերականգնողական և գյուղատնտեսական աշխատանքները:

**Հիմնգերորդ ենթագլուխ՝ Մուշ - Խնուսի հայության փրկության և օգնության կազմակերպումը:**

Երբ 1916 թ. փետրվարի 3-ին գեներալ Թ. Նազարբեկյանի դիվիզիան և նրա կազմում գործող Հայկական Ու կամավորական խումբը, ազատագրեցին Մուշ քաղաքը, այնտեղ գրեթե հայ չէր մնացել: Տեղեկանալով քաղաքի գրավման մասին լեռներում թաքնված և հրաշքով փրկված հայերի փոքրաթիվ խմբերը Մուշ էին գալիս: Ինչպես վկայում է գեներալ Թ. Նազարբեկյանը, Խնուսում հավաքել էին (Խնուսը ռուսները գրավել էին հունվարի 13-ի երեկոյան) մեծ թվով հայ գաղթականներ: Նրանցից շատերը հիվանդ էին և գրեթե զուրկ ամենատարրական պարագաններից: Փրկված հայերին ուղարկում են Ալաշկերտ, որտեղ կար սննդակայան:

ԿՀԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն Մուշ է ուղարկում Կ. Սասունուն: 1916 թ. մարտի սկզբին նրա գլխավորած խումբը, որի կազմում էին Արմենակ Սասունին և Հմայակ Մանուկյանը, ժամանում է Մուշ: Կ. Սասունին նշում է. «Ռուսական տիրապետութիւնը իր ցարական կնիքը կը դնէր ամենուրեք: Ու մենք ստիպուած էինք գերազանցապէս ծածկուիլ գաղթականական դիմակի տակ ու օգնութեան հետ զուգընթաց, մեծ մասամբ գաղտնի, տանիլ վարչական, քաղաքական եւ ինքնապաշտպանական աշխատանքները»<sup>103</sup>:

Թ. Նազարբեկյանի վկայությամբ, ամենածանր խնդիրը Մուշում պարենի հայթայթումն էր: Բանակային համբարակային ծառայությունը գրեթե ոչինչ չէր ուղարկում: Գեներալը ցավով նշում է, որ իր ունեցած սուղ միջոցները հնարավորություն չեն տալիս թեկուզ ամենաչնչին օժանդակություն ցույց տալ ոչ միայն հայերին, այլև քաղաքում մնացած թուրքերին: Այդ դժվարին պահին իր մոտ է գալիս Քաղաքների միության լիազոր Ռոստոմը: Նա խնդրում է իրեն տալ զինվորներ՝ պաշտպանության համար, որպեսզի խուզարկեն և գտնեն գյուղերում հորած ցորենի պաշարները: Գեներալը համաձայնվում է միայն մի պայմանով, եթե գտնվածի կեսը տրվի բանակին: Նման համագործակցությունը հնարավորություն է տալիս և՛ զորքին և՛ բնակչությանն ապահովել հացով<sup>104</sup>:

Ողջ մնացած մշեցիները և սասունցիները կազմակերպում են խուզարկու խմբեր, որոնցում ընդգրկվում են 300-ից ավելի երիտասարդներ: Նրանք քրդական շրջաններից հավաքում կան ազատում են հայերին: Խմբերի ներկայությունը շատ դեպքերում զսպում էր քրդերին հարձակողական գործողություններից: Բացի այդ, նրանք իրականացնում էին հետախուզություն, ռուսական հրամանատարությանը հաղորդելով արժեքավոր տեղեկություններ<sup>105</sup>: Սասունցի Մանուկի ղեկավարությամբ կազմված 100 հոգուց բաղկացած ջոկատը, բազմաթիվ կռիվներ մղելով, ազատում է մեծ թվով հայերի: 1916 թ. ապրիլի սկզբներից մինչև ապրիլի 15-ը Սասունցի Մանուկն իր ջոկատի հետ կառարել է երկու արշավանք և գերությունից ազատել է 2500, իսկ հաջորդ երեքի ընթացքում՝ 770 հոգու: Ընդհանուր առմամբ, նրանք կարողացել են Մուշ բերել 3270 հոգու<sup>106</sup>:

<sup>103</sup> Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 116:

<sup>104</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 19 և շրջ.:

<sup>105</sup> «Համբաւաբեր», թիվ 2, հոկտեմբերի 1916, էջ 1257–1258:

<sup>106</sup> ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 453, թ. 65:

Բնակչության հիմնական կենսական խնդիրները լուծելուց հետո, Կ. Սասունու խումբը ձեռնամուխ է լինում մոտ հազարի հասնող որբերի, այրի կամանց և հիվանդների խնուս տեղափոխման աշխատանքներին: Խնուսում և Արոս գյուղերում կազմակերպված սննդակայանները զգալի օժանդակություն են ցույց տալիս տեղափոխվողներին: Կ. Սասունին հայտնում է ԿՅԲԸ-ն կից գործող Չայկական կենտրոնական կոմիտեին, որ զբաղված լինելով բնակչությանը պարենով ապահովելով, հնարավորություն չեն ունեցել փոխադրել որբերին: Որբերի մեծ մասը փոխադրել են Մոսկվայի հայկական կոմիտեն և Քաղաքների միությունը:

1916 թ. հուլիսի 20-ին ռուսական հրամանատարությունը նախաձեռնում է հարձակում, որը նպատակ ուներ գրավել Անդոկը, ապա իջնել Տիգրիսի հունով և առաջանալ Դիարբեքիր (Տիգրանակերտ): Չաջողության դեպքում նրանց աջակցելու էր Բիթլիսի ջոկատը, որը հարձակվելու էր դեպի Սղերդ: Իր գործողություններում ռուսական հրամանատարությունը լայնորեն օգտագործում էր սասունցիներից կազմված խուզարկու խմբերը: Նրանք Սասունի լեռնաշղթայի վրա դիրքեր էին գրավել և միաժամանակ հետախուզում էին հակառակորդի տեղաշարժը: Երկու օր անընդհատ ընթանում են կատաղի կռիվները: Յուլիսի 22-ին թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումներն անցնելով ռուսական բանակի թիկունքը գրավում են Մշո դաշտի Դըզըլաղաճ գյուղը: Դա վտանգում է Մուշում և դաշտում գտնվողներին:

Յուլիսի 23-ին Կ. Սասունին և ընկերները շտապում են համապատասխան հրահանգներ տալ բնակչությանը՝ պատրաստվել նահանջի: Քաղաքի բնակչության նահանջը սկսում է հուլիսի 23-ի գիշերը, իսկ դաշտի բնակչությանը՝ վաղ առավոտյան: Լեռներից մարտիկների իջնելուց հետո հնարավոր է դառնում մարտական խմբերն օգտագործել նահանջի ճանապարհը պաշտպանելու համար: Մուշից գաղթի ճանապարհը բռնում է հինգ հազար հոգի:

Չայկական կենտրոնական կոմիտեին հղած հեռագրում Կ. Սասունին հայտնում է. «Դէպի Բաշքէյ ճանապարհուեցին 10000-ից անէլի գաղթական և 400 որբ»<sup>107</sup>. խնդրում ենք կարգադրեցէք նրանց դիմաւորելու և օգնութիւն ցույց տալու»<sup>108</sup>: Վտանգը վերանալուց հետո, 1916 թ. սեպտեմբերի 23-ին Կ. Սասունին և իր խումբը վերադառնում են Մուշ: Յուշերում Կ. Սասունին նշում է. «Այս նահանջէն յետոյ, գրաւուած Չայաստանը այլևս մասնակի նահանջներու ենթակայ չեղաւ: Ժողովուրդը կամաց կամաց տեղաւորուեցաւ, մնայուն բնակիչի հանգամանք ստացաւ, իր սեփական աշխատանքով եւ վարուցանքով ապրելու կեանքի մէջ մտաւ»<sup>109</sup>: Յոկտեմբերին Մուշում և շրջակա գյուղերում բնակվում էր մոտ հինգ հազար հոգի:

Այդպիսով՝ ռուսական զորքերի հուլիս 23-ի հերթական նահանջից հետո Կ. Սասունու իրականացրած նոր հաշվառումը ցույց է տալիս, որ 1916 թ. մայիսի 20-ին իր արձանագրած փրկվածների մոտ կեսը այլևս հայրենի բնակավայրեր չի վերադարձել: Ռազմաճակատում իրադրությունը փոքր ինչ կայունանալուց հետո, հայկական կազմակերպությունները, հիմնականում ԿՅԲԸ-ը, վերսկսում են իրենց գործունեությունը:

<sup>107</sup> Իր հուշերում, Կ. Սասունին նշում է, որ որբերի թիվը 500 էր, տես Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 133:

<sup>108</sup> «Չամբաւաբեր», թիվ 32, 7 օգոստոսի 1916, էջ 1005:

<sup>109</sup> Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին, էջ 134:

Կովկասյան բանակի հրամանատարությունը ուժեղացված կերպով ամրապնդում էր թիկունքը, կառուցում էր նոր ճանապարհներ և երկաթգծեր: Միայն նորակառույց խճուղիների երկարությունը հասնում էր երկու հազար կիլոմետրի: Նշված շինարարություններին հիմնականում մասնակցում էին արևմտահայեր: Մուշուն և այլ վայրերում գտնվող հայության համար դա լավ նշան էր, քանի որ վկայում էր, որ իրադրությունը ռուս-թուրքական ռազմաճակատում կայուն է և այլևս ռուսական զորքը չի նահանջի: Ինչպես նշում է Կ. Սասունյին. «1916-ի աշունը դարձավ մեզի համար տեղաւորման եւ ցանքի շրջան մը, որ 1917-ի տարեշրջանին աւելի բարգաւաճ վիճակի մը հասաւ: Երկրի ամբողջ հայութիւնը հետզհետէ ինքնաբաւ կը դառնար»<sup>110</sup>:

Այսպիսով, 1916–1917 թթ. Մուշ-Խնուսում աշխատանքներ են ծավալում հիմնականում երկու կազմակերպություններ՝ ԿԶԲԸ-ն կից գործող Հայկական կենտրոնական կոմիտեն և Քաղաքների միությունը: Ինչպես երզրումի, այնպես էլ Սասունի և Մուշի հայությունը կրել էին ահռելի մարդկային և նյութական կորուստ: Կազմակերպությունների համար առաջնահերթը՝ փրկված հայության համար գոյության տարրական պայմանների ստեղծումն էր և քրդական գերության մեջ գտնվող հայրենակիցների ազատումն էր: Այդ նպատակի համար Մուշ է գործուղվում Կ. Սասունիին և նրա գործընկերները: Մուշ է գալիս նաև Ռոստոմը: Նրանց հաջողվում է փրկագնման, զենքի սպառնալիքով կամ էլ այլ ճանապարհով հասնել զգալի թվով հայերի ազատմանը: Դրան նպաստում է մշեցիներից և սասունցիներից կազմված մարտական խմբերը, որոնց ներկայությունը և անընդհատ մարտերը քրդական տարբեր ավազակախմբերի հետ հարկադրում են վերջիններին «կամավոր» ազատել իրենց մոտ գտնվող հայ գերիներին: Հայ մարտիկները ռուս զինվորների հետ մասնակցում էին տեղական նշանակություն ունեցող մարտական գործողությունների: 1916 թ. աշնանից և ամբողջ 1917 թ. կազմակերպությունները ծավալում են համեմատաբար ազատ գործունեություն: Հայ բնակչությունը հնարավորություն է ստանում վերսկսել կիսատ թողած վերականգնողական և հողագործական աշխատանքները: Հիմնվում են բնակչության տարրական կենսապայմաններն ապահովող տարբեր հաստատություններ՝ սննդակայաններ, խանութ-պահեստներ, հիվանդանոցներ և այլն:

**Եզրակացությունում** ի մի են բերված աշխատության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները:

1. Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատում, 1914-1916 թթ. գործել են տաս (մեկը պահեստային) հայ կամավորական խմբեր: Հայ մարտիկները մասնակցում են ռազմաճակատի գրեթե բոլոր կարևոր ճակատամարտերին: Մարտական գործողությունների ընթացքում կամավորները ցուցաբերում են քաջության և արիության բազմաթիվ օրինակներ՝ արժանանալով ռուսական հրամանատարության զովեստին: Սակայն, սկսած 1915 թ. վերջերից ռուսական կառավարությունը նախաձեռնում է հայկական խմբերի լուծարումը, երկյուղելով, որ նրանք կարող են հիմք հանդիսանալ ազգային բանակի:

2. Պատերազմը հարմար առիթ է հանդիսանում Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության համար իրագործելու Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում բնակվող հայերի ցեղասպանությունը: Կոտորածները սկսում են 1914 թ. սեպտեմբերին և իրենց գագաթնակետին են

<sup>110</sup> Նույն տեղում, էջ 137:

հասնում 1915 թ.: Այդ ոճրագործության հետևանքով հայ բնակչությունը հայրենագրվում է, կրում է մարդկային և նյութական ահռելի կորուստներ:

3. 1915 թ. դժնդակ օրերին արևմտահայության մի մասն իր մեջ ուժ է գտնում կազմակերպելու ինքնապաշտպանություն: Թուրքական բանակին և քրդական ջոկատներին հատկապես ակտիվ դիմադրություն է ցույց տալիս Վան քաղաքը և նահանգի հայկական գյուղերի մեծ մասը: Շնորհիվ հայ կամավորների և ռուսական բանակի առաջխաղացման Վանը և նահանգն ազատվում են ոչնչացումից: Ինքնապաշտպանական մարտեր տեղի են ունենում Արևմտյան Հայաստանի այլ վայրերում՝ Մուշում, Սասունում և Շապին Կարահիսարում, ինչպես նաև կայսրության այլ վայրերում:

4. 1915 թ. մայիսի 7-ին ռուսական հրամանատարության որոշմամբ Վանում կազմվում է ժամանակավոր վարչություն (նահանգապետություն) Արամ Մանուկյանի գլխավորությամբ: Նա կարողանում է կազմակերպել ազգային միասնության իշխանություն, որտեղ ընդգրկվում են հասարակության տարբեր խավերի և կուսակցությունների պատկանող անձինք: Բնակիչները սկսում են վերականգնել ավերված տնտեսությունը: Հայկական կազմակերպությունները Վան և նահանգ են ուղարկում բժշկասանիտարական խմբեր, գյուղատնտեսական գործիքներ և անհրաժեշտ այլ պարագաներ: Նահանգապետության աշխատանքներում ընդգրկվում են վարչական աշխատանքի փորձ ունեցող արևելահայեր: Սակայն հուլիսյան նահանջը վերջ է տալիս հայկական իշխանությանը և վասպուրականցիները հարկադրված են լինում գաղթել Արևելյան Հայաստան:

5. 1916 թ. մայիսի 22-ին հիմնվում է «Պատերազմի իրավունքով Թուրքիայից գրաված Թուրքական Հայաստանի և այլ մարզերի զինվորական զեներալ-նահանգապետի վարչությունը» (Արևմտյան Հայաստանի զեներալ-նահանգապետություն), որը գործում է մինչև 1917 թ. ապրիլի 27-ը: Գեներալ-նահանգապետ է նշանակվում զեներալ Ն. Պեշկովը: Նահանգապետն անմիջականորեն ենթարկվում էր Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարին: Սկզբնապես գրաված տարածքները բաժանվում են տասնմեկ վարչական միավորի, որոնք իրենց հերթին կազմված էին երկու մարզից և ինը օկրուգից: 1916 թ. վերջին և 1917 թ. սկզբին Թուրքիայից գրաված Արևմտյան Հայաստանի շրջանները բաժանվում են 29 օկրուգի: Նահանգապետության առաջնահերթ խնդիրն էր ոչ միայն պատշաճ կարգուկանոնի հաստատումը, տեղաբնիկների կյանքի, զույքի պաշտպանությունը, կրոնական և այլնի ապահովումը, այլև համապատասխան պայմաններ ստեղծել ռուս վերաբնակիչներին գրաված տարածքներում, ինչպես օրինակ Ալաշկերտի հովիտում բնակեցնելու համար: Այդ նպատակով Արևմտյան Հայաստանում սկսում են աշխատել բացառապես ռուսներից կազմված այսպես կոչված բանվորական գումարտակներ: Միաժամանակ իշխանությունները փորձում են իրենց կողմը գրավել քրդական ցեղերին, որը, սակայն չի հաջողվում: Քրդերի մեծ մասը շարունակում էր թշնամական դիրք գրավել ռուսների նկատմամբ և հանդիսանալով թուրքական հրամանատարության հավատարիմ դաշնակիցները, հարձակվում էին ոչ միայն հայերի, ասորիների, այլև ռուսական զորամասերի վրա:

6. 1915 թ. աշնանից մինչև 1916 թ. հայկական տարբեր բարգործական կազմակերպություններ՝ ԿՀԲԸ-ը, Քաղաքների միությունը, Գյուղատնտեսական, ինչպես նաև աներիկյան և մասամբ բրիտանական ընկերությունները, զգալի աշխատանքներ են ծավալում Ալաշկերտում, Բասենում և Վանում: Դա

հնարավորություն է տալիս բնակչությանը սկսել ավերված տնտեսության վերականգնումը: Հիմնվում են սննդակայաններ, պահեստներ, արհեստանոցներ և անհրաժեշտ այլ հաստատություններ: Վանում իշխանությունները թույլատրում են կազմակերպել աշխարհագրային ստորաբաժանումներ (միլիցիա): Սակայն 1916 թ. հուլիսյան նահանջը մեծ վնաս է հասցնում ոչ միայն բնակչությանը, այլև կազմակերպություններին, որոնք ձեռնպահ են մնում հետագա աշխատանքներից:

7. 1916 թ. մայիսի 10-13-ը Պետրոգրադում տեղի է ունենում գաղթականների խնդրով զբաղվող կազմակերպությունների I համագումարը: Համագումարն իր առջև նպատակ էր դրել միավորել հայ փախստականներին օժանդակություն ցուցաբերող կազմակերպություններին: Չնայած այն հանգամանքին, որ համագումարում ներկայացված էին զգալի թվով կազմակերպություններ, չի հաջողվում միավորել նրանց: Կազմակերպություններն ու ընկերությունները շարունակում են գործել անջատ և միայն անհրաժեշտության դեպքում են միավորում իրենց ուժերը:

8. Առավել ծանր վիճակում են հայտնվում Երզրումի, Երզնկայի, Բաբերդի, Մուշի հայությունը: Նրանք ի տարբերություն Ալաշկերտի և Վանի, մարդկային և նյութական ահռելի կորուստներ էին կրել: Կամանց և երեխաների մի մասը որպես պատանդ պահվում էին քրդերի մոտ: Հայկական կազմակերպությունների համար առաջնահերթ է դառնում նրանց գերությունից ազատելը և գոյատևման համար տանելի պայմաններ ստեղծելը: Կատարված աշխատանքների շնորհիվ հնարավոր է լինում աստիճանաբար սկսել Կովկասի փոխարքայությունից և Հյուսիսային Պարսկաստանից գաղթականների տեղափոխումը, ավերված բնակավայրերի վերականգնումն ու գյուղատնտեսական աշխատանքների սկսումը: Հայկական և ռուսական կազմակերպություններն իրենց հնարավորությունների սահմաններում ապահովում են գյուղացիներին լծկաններով, սերմացուով և գյուղատնտեսական գործիքներով:

9. Տարբեր կազմակերպություններ իրենց գործունեության ընթացքում իրականացնում էին ոչ միայն վերականգնողական, այլև գրավված տարածքների հայացման աշխատանքներ: Առաջին քայլեր են ձեռնարկվում փախստական և գաղթական բնակչությանը հարազատ բնակավայրերում տեղավորելու համար, ինչպես նաև քրդերի կողմից լքված գյուղերում: Մուշում կազմակերպվում են տեղական ինքնակառավարման մարմիններ և ինքնապաշտպանական խմբեր:

10. 1917 թ. փետրվարյան հեղափոխությունն առավել բարենպաստ պայմաններ է ստեղծում Արևմտյան Հայաստանի վերաշինության համար: Հայկական կազմակերպությունները ազատ գործելու հնարավորություն են ունենում: Փոխվում է ռուսական հրամանատարության վերաբերմունքը քրդական ցեղերի նկատմամբ: Սակայն հետագա իրադարձությունները հնարավորություն չեն տալիս ամբողջապես իրականացնել նախատեսված ծրագրերը: Նույն թվականի հոկտեմբերին բուլշևիկյան հեղաշրջումը և Կովկասյան բանակի զորամասերի կողմից ռուս-թուրքական ռազմաճակատի լքումը հայությանը կանգնեցնում են մի նոր իրավիճակի՝ գոյատևման պայքարի շարունակման առջև:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ աշխատություններում.

1. Վասպուրականի հայության գոյամարտը 1915 թվականին, ՀՀ ԳԱԱ Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, թիվ 1, էջ 19–30:

2. Վան քաղաքի հայության ինքնապաշտպանությունը 1915 թվականին, Հայկական բանակ, թիվ 1, Երևան, 1996, էջ 15–24:

3. Մարտական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում. Սարիղամիշյան օպերացիան, Հայկական բանակ, թիվ 3-4, Երևան, 1996, էջ 13–29:

4. Վան քաղաքի քաղաքապետարանի վերահսկիչ Իսահակ Տեր-Ղազարյանի հաշվետվությունը, ԲՀԱ, թիվ 1, Երևան, 2004, էջ 38–43:

5. Ալեքսանդրա Բախտուրիհան. «Ռուսական կայսրության երկրամասերը. Պետական կառավարումը և ազգային քաղաքականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–1917 թթ.) (գրախոսություն), ԲՀԱ, թիվ 2, Երևան, 2004, էջ 187–203:

6. Օտարալեզու աղբյուրները 1915 թ. ցեղասպանության մասին (հուշեր, վկայություններ, փաստեր), Մեծ եղեռն-90: Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005, էջ 24–29:

7. Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը 1915 թվականին, Հայկական բանակ, թիվ 1, Երևան, 2005, էջ 13–18:

8. Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, «Գիտություն» հրատ., 2005, 401 էջ:

9. Վանի նահանգապետության դատաիրավական համակարգի ձևավորման պատմությունից, ԲՀԱ, թիվ 1, Երևան, 2006, էջ 48–65:

10. Վարազդատ Տերոյան. Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյան, հրատարակության պատրաստեց Ն. Դերոյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ 2006, 436 էջ:

11. Աշոտ Աթանասյանի գործունեությունը Արևմտյան Հայաստանի վերաշինության գործում, ԲՀԱ, թիվ 1-2, Երևան, 2007, էջ 37–54:

12. Հայկական կամավորական խմբերի գործունեության պատմությունից, ԲՀԱ, թիվ 1, Երևան, 2008, էջ 44–61:

13. Փաստաթղթեր Վասպուրականի վերաշինության վերաբերյալ (1915–1916 թթ.), ԲՀԱ, թիվ 2, Երևան, 2008, էջ 23–39:

14. Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թ. մայիսի 8 - հուլիսի 17): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2008, 130 էջ:

15. Փաստաթղթեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան բանակի հետախուզական ծառայությունների գործունեության մասին, ԲՀԱ, թիվ 2, Երևան, 2009, էջ 45–54:

16. Ռուբեն ավագ քահանա Բեկզուլյանցի նամակները Արևմտյան Հայաստանում ռուսական իշխանությունների քաղաքականության մասին, ՀՀ ԳԱԱ ԼՀԳ, թիվ 3, Երևան, 2009, էջ 298–301:

17. Ռուսական բանակի հայկական և քրդական ջոկատները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ԲՀԱ, թիվ 1, Երևան, 2010, էջ 26–40:

18. Ականատեսի վկայությունները Մուշ քաղաքի հայության կոտորածի մասին, ՀՀ ԳԱԱ ԼՀԳ, թիվ 1-2, Երևան, 2010, էջ 457–458, 460–469:

19. Ս. Էջմիածնի Եղբայրական օգնության հանձնաժողովի ներկայացուցիչ Ջավեն վարդապետի նամակները Կովկասի հայոց բարեգործական ընկերության

նախագահ Սամսոն Զարուբյունյանին՝ ազատագրված Կարին քաղաքի և գավառների հայ բնակչությանն օգնելու մասին, ԲՀԱ, թիվ 2, Երևան, 2010, էջ 60–70:

20. Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ, Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), Երևան, Զայաստանի ազգային արխիվ, 2010, էջ 25–51:

21. Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, ԶԶ ԳԱԱ ԼՀԳ, թիվ 1-2, Երևան, 2011, էջ 337–362:

22. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տարրնահայությանը օգնության կազմակերպումը, ԶԶ ԳԱԱ ՊԲՀ, թիվ 1, Երևան, 2011, էջ 36–60:

23. Տրապիզոնի Գաղթական Զայութեան Փրկութեան Կազմակերպումը Ա. Զամաշխարհային պատերազմին (1916–1917 թթ.), Զայկազեան Զայագիտական Զանդես (ԶՀԶ), թիւ ԼԱ, Պէյրութ, 2011, էջ 519–552:

24. Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների գործունեության պատմությունից (1914–1917 թթ.), ԶԶ ԳԱԱ ՊԲՀ, թիվ 3, Երևան, 2011, էջ 94–119:

25. Զաղթանակած Վանը (Ա-Դոյի անտիպ հուշերից), ԶԶ ԳԱԱ ՊԲՀ, թիվ 1, Երևան, 2012, էջ 223–242:

26. Թիֆլիսի հայոց գյուղատնտեսական ընկերության գործունեությունը Ալաշկերտի հովտում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–1916 թթ.), ԶԶ ԳԱԱ ԼՀԳ, թիվ 1, Երևան, 2012, էջ 16–27:

27. Վանի Նահանգապետութեան Պատմութիւնից (Յունիս 14 – Յուլիս 7 – Յուլիս 25, 1915) եւ Ա-Դօն, ԶՀԶ, թիւ ԼԲ, 2012, Պէյրութ, էջ 407–430:

## ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ И АДМИНИСТРАТИВНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ (ИЮЛЬ 1914 г. - ФЕВРАЛЬ 1917 г.)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01. История Армении

Защита состоится 14 сентября 2012 года в 14<sup>00</sup>, на заседании специализированного совета по истории 004 ВАК РА при Институте истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/г).

### РЕЗЮМЕ

Во время Первой мировой войны проживающие на территории Османской Империи западные армяне были подвергнуты массовой депортации и извращениям-геноциду. В некоторых местах западные армяне смогли оказать достойное сопротивление младотурецким погромщикам и частью спаслись. В годы войны, с 1914 по 1916 гг., армяне, с согласия и при поддержке русских властей организовали 10 добровольческих дружин (одна запасная), которые сражались вместе с русской армией. Они участвовали во всех знаменитых сражениях и были отмечены русским командованием. Однако, начиная с конца 1915 и в начале 1916 г. армянские добровольческие дружины были расформированы, так как русское правительство не хотело иметь национальных военных формирований, которые могли стать основой национальной армии.

Первая мировая война стала поводом для младотурецкого правительства Османский Турции, чтобы уничтожить армян в Западной Армении и армянонаселенных городах и деревнях Малой Азии. Для этого были сформированы специальные подразделения - „Тешкилат махусе“, которые организовали геноцид армян. В убийствах и депортации армян приняли участие полицейские силы и армейские подразделения. Геноцид армян начался с сентября 1914 г. и достиг своего апогея в 1915 г. Было уничтожено 1,5 миллиона армян. Однако в эти критические дни армяне нашли в себе силы, чтобы организовать сопротивление турецким погромщикам. В разных населенных пунктах Западной Армении были организованы вои сопротивления. В г. Ван, где армяне проживали в двух кварталах- Айгестан и Кахакамец, были сформированы из граждан и крестьян отряды сопротивления. Армянские кварталы были окружены турецкими регулярными войсками и курдскими отрядами. Бои сопротивления начались 7 апреля и продолжались до 4 мая. Несмотря на численное превосходство, противник не смог сломить сопротивление армян. Внезапное продвижение русской армии и армянских добровольческих дружин заставило турецкое командование снять осаду и спешно отступить.

7 мая 1915 г. по приказу русского командования было учреждено Ванское временное правление (губернаторство) под руководством руководителя Ванской самообороны Арама Манукяна. 8 мая были организованы органы управления - губернское правление, муниципалитет, полиция и органы местной власти. В правлении были задействованы также рускоподданные армяне. Усилиями А. Манукяна были сформированы органы власти, в которые вошли самые лучшие силы как западных так и восточных армян. Постепенно налаживалась повседневная жизнь. Армянские



организации стали организовать помощь жителям Вана и провинции. Однако 11 июля, внезапно, русские войска стали отступать. Жители города и провинции не имея достаточных средств для самообороны, 18 июля были вынуждены отступить. Во время отступления, на безоружных детей, женщин и стариков напали курдские племена. Более 10 тысяч армян были убиты.

22 мая 1916 г. был назначен военный генерал-губернатор областей Турции, занятых по праву войны, подчиненный главнокомандующему Кавказской армией. Генерал-губернатором был назначен генерал Николай Пешков. Были приняты меры переселения из России русских и казаков, в основном в Алашкертскую долину. 26 апреля 1917 г. Турецкая Армения (Западная Армения) и другие области Турции, занятые по праву войны, были изъяты из подчинения военных властей и перешли под управление Временного правительства в лице его генерал-комиссара.

После занятия Кавказской армией значительной части Западной Армении, армянские, русские, а также и американские благотворительные, общественные и духовные организации стали помогать армянскому населению восстанавливать хозяйство и начать нормальную повседневную жизнь. Были направлены в разные области Западной Армении - в Алашкертскую, Ванскую, Мушскую, Эрзерумскую и другие, врачебно-санитарные, агрономические и другие группы, которые помогали выжившим жителям восстановить свои дома и начать сельскохозяйственные работы. Организации организовывали приюты для детей сирот, больницы и питательные пункты. Постепенно налаживается жизнь в населенных пунктах. Особенно положение стало улучшаться после Февральской революции 1917 г. Однако, октябрьский переворот стал основной причиной, чтобы русские войска ушли из Западной Армении.

**THE MILITARY-POLITICAL AND ADMINISTRATIVE-ECONOMIC SITUATION  
OF WESTERN ARMENIA  
(JULY, 1914-February, 1917)**

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the  
specialization of „History of Armenia“ 07.00.01

The defense of the dissertation will be held on the 14<sup>th</sup> of September, 2012, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

**SUMMARY**

During the World War I, West Armenians inhabiting the territory of the Ottoman Empire underwent mass deportation and massacres - genocide. Those West Armenians who in some places managed to put up resistance against the Young Turk pogromists were partly saved. In the years of the war, from 1914 to 1916, Armenians with approval and assistance of Russian authorities organized 10 volunteer troops (one reserve squad) which fought jointly with the Russian Army. They took part in all the famous battles and were appreciated by Russian command. However, since the end of 1915 and at the beginning of 1916, Armenian volunteer troops were dismantled due to reluctance of Russian government to have national military formations which could have developed into a national army.

World War I gave the Young Turk government of the Ottoman Empire occasion to exterminate Armenians in West Armenia and those cities and villages of Asia Minor which were inhabited by Armenians. For this purpose special subdivisions - *Teshkilat Mahsuse* – were created which organized genocide of Armenians. Massacres and deportation of Armenians were participated by police forces and army subdivisions. The Armenian genocide began in September 1914 and climaxed in 1915. 1,5 million Armenians were annihilated. But on those critical days the Armenians managed to summon their strength to put up resistance against the Turkish pogromists. Self-defense battles were organized in different places inhabited by West Armenians. In the city of Van where Armenians lived in two districts – Aygestan and Kaghakamej – resistance squads were created from citizens and peasants. The Armenian districts were surrounded by the Turkish regular army and Kurdish troops. Resistance battles started on the 7<sup>th</sup> of April and continued up to the 4<sup>th</sup> of May. In spite of their numerical preponderance, the enemies could not overcome the resistance. The sudden advance of the Russian Army and Armenian volunteer troops forced the Turkish command to raise the siege and quickly withdraw.

On the 7<sup>th</sup> of May, by order of the Russian command, there was established the Temporary Governance of Van headed by the Van resistance leader Aram Manoukyan. On the 8<sup>th</sup> of May, there were organized administrative institutions – government, municipality, police and local authorities. The management was also participated by Armenians with Russian citizenship. Due to efforts of A. Manoukyan, there was created a government containing the best contributions of both the West and East Armenians. Everyday life was gradually returning to normal. Armenian organizations started to launch help for the people of Van and its province. However, on the 11<sup>th</sup> of July, the Russian Army suddenly began to

withdraw. So did the residents of the city and the province on the 18<sup>th</sup> of July having not enough means for self-defense. On the way of retreat, the unarmed children, women and old men were attacked by Kurdish tribes. More than 10.000 Armenians were killed.

On the 22<sup>nd</sup> of May 1916 a General-Governor subordinate to the Commander-in-Chief of the Caucasian Army was appointed to those regions of Turkey which were occupied by the Right of War. General Nikolay Peshkov held this office. There were taken steps to resettle Russians and Cossacks from Russia, mainly in Alashkert Valley. On the 26<sup>th</sup> of April 1917, Turkish Armenia (West Armenia) and other regions of Turkey occupied by the Right of War were moved out of military control and put under subordination of the Temporary Government represented by its General-Commissar.

After considerable parts of West Armenia had been occupied by the Caucasian Army, Armenian and Russian, as well as American relief societies, public and religious organizations started to help the Armenian population restore economy and return to normal everyday life. Medical sanitary, agronomic and other groups were sent to various regions of West Armenia – Alashkert, Van, Moush, Erzerum – to help the survivors rebuild their houses and start agronomic work. There were organized orphanages, hospitals and feeding centers. Communities were gradually coming back to life. The situation started to improve especially after the February Revolution of 1917. But what caused the withdrawal of the Russian troops from West Armenia was mainly the October Coup.